

# ԼԵՅՍ

ԿՐԹՆԵԿԱՆ, ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ ԵՒ Ս. ԳՐԱՅԻՆ  
ՊԱՇՏՈՆԵԿԱՆ ԵՐԿԱՄԱՆԹԵՐԹ  
ԳԱՆԱՏԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԵԱՆ



**LUYS** — Revue bimestrielle

Prélature Arménienne du Canada

Rédacteur : Papken Topjian

3401 Olivar-Asselin, Montréal, Qc. Canada H4J 1L5

Tél.: (514) 856-1200 • Fax : (514) 856-1805

Courriel : prelacy@armenianprelacy.ca



## **ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ**

**ՄԵԾ ԱԻԵՏԻՍԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ**

**Խաժակ Արքեպիսկոպոս**

**ԱՍՏՈՒԱԾ-Ա-ԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ  
ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ**

**Աբել քհնյ. Մանուկեան**

**ԾՆՆԴԵԱՆ ԽՈՂԵՐ**

**Բաբգէն Ա. քհնյ. Մազուտեան**

**ՄԱՅԵՍՏԵՐ ԷԿԷԱՐՏ**

**Յակոբ Արք. Գլնճեան**

**ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ**

**Դիւան Ազգային Առաջնորդարանի**

**ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ**

**ՀԱՅՑ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ**

**Գրիգոր Հոթոյեան**

# ՄԵԾ ԱՒԵՏԻՍԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»  
Ղուկա. Բ. 14

Աշխարհի մտածողութիւնն ու մարդկային փոխյարաբերութիւնները յեղաշրջող ամենէն սքանչելահաս պատմութիւնը՝ հակադիր ծայրայեղութեամբ մը, սկիզբ առաւ ամենէն խեղճ ու անտեսուած, չըսելու համար արհամարհուած պայմաններու եւ ընկերային միջավայրի մը մէջ:

Գիշերային լուռութեան մէջ, լեռնակողին ննջող հօտին պահակութիւնը ընող հովիւներու շնչային զրոյցը, սարսափահար քար լուռութեան վերածուեցաւ յանկարծական յայտնութեամբը անծանօթի մը, որ իրենց կ'ըսէր «մի վախնաք, ձեզի ուրախ լուր մը պիտի տամ...: Այսօր ձեր փրկիչը ծնաւ»:

Եւ յանկարծ կ'ըսէ Աւետարանիչը լեռնային ամայութիւնը լեցուեցաւ երկնային բազմութեան մը օրհնաբանութեան մեղեդիներովը.

«Բարձունքներուն մէջ Աստուծոյ փառք,  
Խաղաղութիւն երկրի վրայ  
Եւ մարդոց հանդէպ հաճութիւն»:

Բնական զուգորդութեամբ մը մտածումներս պահ մը կ'երթան մեր նահատակուած մեծ բանաստեղծներէն Սիւսանթոյի բանաստեղծութեան. «Ու մեծ մայրը կը սկսի տնեցիներէն իրենց տնովն օրհնելու: Խաղաղութիւն մեր այս տարուայ մեռեալին, խաղաղութիւն ձեր բոլորին...: Յետոյ ոտքի՝ մատղաշ կոյսերն ու հարսներին համբուրելով՝ անոնց կ'ըսէ...

Վաղն առաւօտ՝ մթնշաղիկն՝ այգուն երգն երգելով՝  
Ջրի գացէք, Նոր Տարիին, աղբիւրներէն, ակնթարթ մը՝  
նսկի է որ կը վազէ...»:

Եւ այսպէս, տօնական այս օրերուն՝ գիտակցուած կամ անգիտակցական դարաւոր սովորութեամբ, շատերս մեր յոյսի սահմանները շալկած կ'երթանք դէպի աղբիւրը, եւ գիշերուայ այդ մոգական պահուն կը վերակենդանանան հին յոյսեր, կը ծնին նոր յոյսեր, մտադրութիւններ, երազներ: Կը նայինք ապագային ու կը սպասենք: Ի՞նչ պիտի ուզէր ունենալ իսկապէս իւրաքանչիւր անհատ: Բազմահազար տարիներու իր գոյութեանը ընթացքին մարդ էակը ի՞նչ է փնտրած ու հետապնդած այնքան տազնապով, ինքնամոռաց հեւքով՝ հարստութիւնն, փա՞ռք, գեղեցկութիւնն: Ափսոս, կեանքի փորձառութիւնը ցոյց տուած է, թէ այս բոլորը ոչ միայն խաբուսիկ են ու անցաւոր, այլ նաեւ ու մանաւանդ աղբիւր են յաւելեալ տազնապի ու մտահոգութեան, որովհետեւ խոստովանինք թէ ոչ, գիտենք թէ անոնք վերջ ի վերջոյ, ուշ կամ կանուխ, դատապարտուած են կորուստի: Ոչ, մարդը, իր դարաւոր փորձով, կարօտագին որոնած է անկորնչելին, մնայունը, յաւերժականը, որուն ոչ «գոդ

մերձենայ եւ ոչ ցեցք ապականեն»։ Մարդկութիւնը այդ անկորնչելին ու յաւերժականը կոչած է երջանկութիւն։

Կարելի է ընդունիլ, որ հարստութիւնը, փառքն ու գեղեցկութիւնը կրնան ժամանակաւորապէս եւ երեւոյթականօրէն նպաստել երջանկութեան, բայց ինչպէս ըսի՝ երջանկութիւնը չեն անոնք։ Երջանկութեան հասնելու համար պէտք է կարենալ ձեռքազատուիլ այս խաբուսիկ երեւոյթներէն եւ աւելին՝ ինքնախաբէութիւններէն, պէտք է լսել խաղաղ գիշերին մէջ հնչող հրեշտակներուն ձայնը՝ որ մարդոց կ'աւետէ յաւերժական երջանկութեան ուղին՝

«Փառք ի բարձունս Աստուծոյ,  
եւ յերկիր խաղաղութիւն,  
ի մարդիկ հաճութիւն»։

Այս է Ս. Ծննդեան անկորնչելի եւ յաւերժական խորհուրդը՝ երջանկութեան ուղին՝ Ա) ամէն վայրկեան անդրադառնալ Աստուծոյ սքանչելագործութեան, կեանքը լեցնող բարիքներուն եւ Իրմով յարատեւօրէն յարութիւն առնող եւ վերածնող լոյսին ու փառք տալ Աստուծոյ՝ շնորհակալ ըլլալ Իր բարիքներուն համար։ Բ) Խաղաղութիւն՝ ոչ այն խաղաղութիւնը, որ մարդիկ շրթունքներուն ծայրով կը գովերգեն ու անոր ետին պահուրտած կը դաւադրեն, այլ խաղաղութիւնը, որ իւրաքանչիւր անհատի հոգիին մէջ կը ծաղկի՝ երբ խղճահարութենէն ու մեղքէն չմթագնած պայծառ աչքերով կը նայի ինք իր աչքերուն մէջ ու կը զգայ այդ խաղաղութեան տարածուիլը իր կեանքին ու գործին վրայ։ Գ) Եւ վերջապէս, երբ կը գիտակցի Աստուծոյ անսահման ու յաւերժական սիրոյն իր հանդէպ եւ որպէս փոխադարձութիւն այդ սիրոյն իր հոգին կը յորդի սիրովը իր նմաններուն։

Շնորհաւոր Նոր Տարի եւ Ս. Ծնունդ

Յանուն Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդարանի Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական Ժողովներուն եւ անձնապէս, բոլորիդ կը մաղթենք արեւշատ քաջառողջ օրեր, բարեաց գործոց յաջողութիւն եւ երջանկալից, խաղաղ, մարդահաճոյ եւ աստուածահաճոյ բարօր կեանք։

Ձեզի մեզի մեծ Աւետիս։

Աղօթարար՝

**ԽԱԺԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈԲԱՆ**

Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի

# ԱՍՏՈՒԱԾ-Ա-ԲԱՆ-ՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ

«Եւ Բանն մարմին եղեւ, եւ բնակեաց ի մեզ, եւ տեսաք զփառս նորա զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք եւ ճշմարտութեամբ — Զի ի լրութենէ անտի նորա մեք ամենեքին առաք շնորհս փոխանակ շնորհաց»:

«Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ տեսանք անոր փառքը, Հօրմէ առած Միածինի փառքը(1)՝ շնորհով եւ ճշմարտութեամբ լեցուն...Իսկ մեք բոլորս Անոր լիութենէն է որ շնորհի վրայ շնորհ ստացանք (Յովհ. Ա. 14-15):

Մեր մայր եւ Ս. Եկեղեցւոյ տօնացոյցը մեզ ծիսական եւ կրօնական պաշտամունքի նոր շրջանի մը կ'առաջնորդէ: Կը թեւակոխենք Յիսնական ժամանակահատուածը՝ սկսելով Յիսնակի Բարեկենդանի Կիրակիէն մինչեւ Ս. Ծնունդի եւ Աստուածայայտնութեան տօնը կանխող յիսուն օրերու նախապատրաստութեան, ներհայեցողութեան եւ ապաշխարութեան, այլ խօսքով՝ հոգեւոր վերանորոգումի կեանքին ծիրը: Առօրեային տաղտուկը, հանապազօրեայ հացին խնդիրը, ընտանիքին, աշխատանքին, շահուն, պաշտօնին ու փառքին վերաբերող մտահոգութիւններուն հեւքը մեր ուշադրութիւնը յաճախ կը շեղեն հիմնականէն ու զայն կը կեղբոնացնեն երկրորդական եւ մեր բուն իսկ էութեան հետ ոչ անպայմանօրէն կապ ունեցող անցողակիւթիւններուն վրայ:

Յիսնական այս շրջանի համար նշուած՝ Յիսնական առաջին շաբթուան, Ս. Յակոբայ եւ ապա Ս. Ծննդեան երեք շաբաթապահքերը օրուան ընթերցումներուն եւ կիրակնօրեայ ձաշու Աւետարաններու հաղորդած պատգամներուն ընդմէջէն կու գան թեւադրելու մեր մտքին ու ազդելու մեր հոգիին վրայ, թէ «ունենալու» եւ «լինելու» միջեւ հսկայ տարբերութիւն մը կայ:

Ունենալը լոկ միջոցն է ըլլալուն. մեր գոյութիւնը մինչդեռ, մեր ներքին լինելութիւնը իր աստուածաստեղծ բնութեամբ կոչուած է ըլլալու գերիվեր ինչքին «ունենալու» պայմանաւորութենէն՝ ցորչափ որ ան Աստուծոյ մեծափառ կամքին կը համապատասխանէ ու անսացողը կը մնայ աստուծային առատագեղ Սրբոյն: Հետեւաբար, Յիսնական առաջին Կիրակի օրուան ձաշու Աւետարանն ալ «Անմիտ մեծատուն»ին հակադրելով մարդ արարածին բարոյական արժէքը, զօրեղ կոչով մը կը թելադրէ. «Բայց դուք Աստուծոյ արքայութիւնը խնդրեցէք, եւ այն բոլորը աւելիով պիտի տրուի ձեզի» (Ղկ ԺԲ, 31):

Աստուծոյ արքայութիւնը՝ Աստուծոյ ներկայութիւնն է ինքնին: Աստուծոյ անունը նոյնինքն Աստուած է, որ Հին Ուխտի պատմութեան ընթացքին իբրեւ Անկէզ Մորենի, ապա Օրէնքին ու Իր երկիւղով աւլցուն ընտիր

մարդոց՝ մարդարէներու խօսքին ու գործին միջոցաւ կ'արտայայտուի: Աստուած ուղղակի կը միջամտէ մեր ժամանակի եւ պատմութեան, մշակոյթի եւ ընկերային կեանքին: Իր զգալի բնակութիւնը հաստատելով մեր միջավայրին՝ Ուխտի Տապանակին մէջ եւ սրբութեան խորանին վրայ:

Մարդկային մեր միջավայրէն ներս կատարուած աստուածային սոյն միջամտութիւնները նուաճումները չեն մեր մտքի բարձր թռիչքներուն, եւ ոչ ալ անոնք աւարն են մեր պիրկ մկաններու ուժին. ընդհակառակը, Աստուած ինքզինք բացայայտելով մեր գիտակցական պատմութեան տարբեր հանգրուաններուն, քայլ առ քայլ ընդառաջ կու գայ մեզի՝ անմնացորդ նուիրումի եւ անքակտելի պատկանելիութեան իբրեւ գրաւական տալու համար Իր Սէրը:

Ծնողքի եւ զաւկի միջեւ փոխյարաբերութիւնը կենսաբանական (biologique) տուեալներով պայմանաւորուած ըլլալէ աւելի, սիրոյ երկկողմանի յարաբերութեան սկզբունքին եւ տիեզերքի մը պէս անհուն ապրումներու իրողութեան վրայ կը խարսխուի: Այլապէս կենդանական աշխարհն ալ իր տեսակը կենսաբանական զուգաւորումով կ'ապահովէ եւ կ'առաջնորդուի բնագրական սկզբունքով միայն:

Անասունին նկատմամբ մարդուն ունեցած առաւելութիւնը լոկ գիտակցական պահը չէ անշուշտ: Մարդ արարածը գիտակցութիւն ունեցող կենդանի մը (animal rational) ըլլալէ աւելի իր հոգւոյն մէջ ապրումներու հսկայ ներաշխարհ մը կը կրէ՝ օժտուած ըլլալով խղճի, պատասխանատուութեան, նուիրուածութեան եւ սիրոյ անզուգական զգացումներով:

Այս իմաստով, Աստուծոյ ինքնաբացայայտման պատմութիւնը միաժամանակ մարդ արարածին նկատմամբ Աստուծոյ տածած Սիրոյ յայտնութիւնն է:

Աստուածային Սէրը սակայն մարդկային սիրոյն հետ համատեղելի չէ: Ան ենթակայ չէ մեր ներաշխարհէն բխող ապրումներու տրամաբանութեան: Մենք զայն կրնանք բացառաբար անալոզ յարաբերութեան մը մէջ ըմբռնել. այսինքն՝ մարդկայինին նկատմամբ անընդմիջելի մօտութեան եւ անհասանելի հեռաւորութեան համեմատութեամբ: Ոչ մէկ բան կրնայ մարդուն անհասանելիօրէն այնքան հեռու ըլլալ որքան Աստուած, միեւնոյն ատեն՝ ոչինչ կրնայ մարդուն անընդմիջելիօրէն այնքան մօտ ըլլալ՝ որքան Աստուած: Մենք մեր անձին անգամ չենք կրնար այնքան մօտ զգալ՝ ինչքան այն անընդմիջելի մօտութիւնն է, որ Աստուած ունի մեր նկատմամբ, պահելով հանդերձ այն անհասանելի հեռաւորութիւնը, որ Արարիչը սովորական արարածէն անպայմանօրէն կը տարբերէ:

Աստուածային Սէրը մարդկային սիրոյն հետ համատեղելի չէ: Ան ենթակայ չէ մեր ներաշխարհէն բխող ապրումներու տրամաբանութեան, տրուած ըլլալով որ մարդկային զգացումը յարափոփոխ է եւ ենթակայ՝ ազդեցութիւններու: Մարդկային սէրը կրնայ նահանջել, տկարանալ ու դալկիլ կամ իր յոռեգոյն ձեւերուն մէջ ատելութեան վերածուիլ: Աստուածայինը միշտ արարիչ, բնագանցական, յարատեւ եւ փրկարար էութիւն ունի: Եւ ճիշդ այս Սէրն է, որ Անկէզ Մորենիի մը կերպարանքէն, Օրէնքին շրջագիծէն, միջնորդ-

ներու խօսքերէն ու գործերէն դուրս պիտի գար ամբողջական եւ անմնացորդ նուիրումով համայն մարդկութեան ինքզինք յայտնելու համար Իր արարիչ Խօսքին՝ Աստուած Բանին եւ փրկչական գործին մէջ:

Այս է ահաւասիկ Աստուածայայտնութեան, Աստուած Բանին Մարդեղութեան կամ Ս. Ծնունդին Խորհուրդը, որ այլ խօսքով՝ Աստուած-ա-Բան-ութիւն կը կոչուի:

Քրիստոնէական աստուածաբանութիւնը ամէն բանէ առաջ Աստուծոյ Խօսքին Մարդեղութեան Խորհուրդէն, թէպէտ Բեթղեհէմի անհիւրընկալ այրին մէջ աստուածային Սիրոյ ծնող եւ մարդկութիւնը համայն վերածնող Աւետիսէն պէտք է ընկալուի ու այդպէս մեկնաբանուի:

«Աստուած-ա-բան-ութիւն» բառը կազմուած է յունարէն լեզուի զոյգ արմատ բառերէն՝ *թէոս* եւ *լոկոս*, այսինքն՝ աստուած եւ խօսք. այս հասկացութիւնը, հաւանաբար, առաջին անգամ օգտագործած է յոյն դասական իմաստասէրներէն Պլատոնը՝ «աստուածներու մասին խօսք» առումով: Սոյն յղացքը իր զարգացման պատմութեան ընթացքին, յատկապէս իմաստասիրութեան եւ կրօնագիտութեան մէջ, զանազան հեղինակներու կողմէ կիրարկուած է այլազան իմաստներով: Անդրադառնալով Քրիստոնէութեան, բնական է, մեզ հետաքրքրողն այստեղ յայտնաբանական աստուածաբանութեան մէջ ընդունուած եւ օգտագործուած սկզբնական նշանակութիւնն է:

Բուն առումով, Աստուածաբանութիւնը իբրեւ յայտնութիւն, չի նշանակեր Աստուծոյ մասին գիտութիւն մը: Աստուծոյ մասին հաւաստիացողը նախ մարդը չէ, որ փորձառական գիտութիւն մը կիրարկելու պէս կարենայ գԱստուած առարկայացնելով իր քննութիւններուն արդիւնքին մէջ գիտելիքներ ամբարել Աստուծոյ մասին: Ընդհակառակը՝ Աստուած է որ նախ եւ առաջ մարդուն կը խօսի, Իր փրկարար ներկայութիւնը կը պարզեւէ անոր եւ կարեւրութիւն կը շնորհէ մէկանգամ ընդմիջտ յայտնուած, խօսուած Աստուած Բանին պատասխանելու: Այս իմաստով, աստուածաբանութիւնը մարդ արարածի աստուածային Խօսքին ուղղած պատասխանն է: Որքա՞ն դիպուկ եւ գեղեցիկ է հոս Ս. Գրիգոր Նարեկացւոյ «Խօսք ընդ Աստուծոյ» սահմանումը՝ սիրտի խորքէն բխող խօսք Աստուծոյ **հետ**, ի պատասխան այն կոչին եւ փորձառութեան, որ արարած մարդը կ'ընդունի եւ կ'ունենայ դէմ յանդիման իր Արարչին: Այսպէս ընկալուած աստուածաբանութիւնը կը դառնայ երկխօսութիւն, աղօթք նոյնիսկ, եւ ոչ թէ պարզապէս Աստուծոյ մասին գիտելիքներու հաւաքածոյ մը:

Ահաւասիկ աստուածաբանութիւնն այսպէս իր բուն իմաստին մէջ միայն հասկնալի կը դառնայ, երբ մենք Աստուծմէ մարդուն ուղղուած Խօսքէն կ'ըմբռնենք ու կը փորձենք զայն այդպէս մեկնաբանել: Մէկանգամ ընդմիջտ մարդուն ուղղուած այս Խօսքը նոյն աստուածայայտնութիւնն է, որ Հին Ուխտի պատմութեան մէջ հաւատքին ու ցեղին նահապետներուն խօսուած էր, որպէս «Աստուած Աբրահամու, Իսահակայ եւ Յակոբայ»: Եթէ ուշադիր ըլլանք, պիտի նկատենք, որ ամբողջ աստուածաշնչական պատմութիւնը

Աստուծոյ շնորհած յայտնութիւններուն յաջորդող անդրադարձներ, աւելի ճիշդ՝ պատասխաններ են. փոխյարաբերութիւն եւ երկխօսութիւն Արարչին ու արարածին, Աստուծոյ եւ մարդուն միջեւ: Նախաձեռնողը սակայն միշտ Աստուած է, որքան ալ մարդու բնութեան էական տարրերէն մին՝ «զի՞նչ է՞ զի» ըլլայ, եւ կամ ան յաւիտեանական որոնողի մը դիրքին մէջ գտնուի: Աստուած է ինքզինք մարդուն յայտնողը, Ան է մարդուն կանչողն ու սիրողը եւ փոխարէնը անկէ պատասխան ու անկեղծ սիրոյ արձագանգ պահանջողը:

Այս մասին Անկիզելի Մորենիին դասական օրինակը Աստուծոյ եւ մարդուն միջեւ զարգացող երկխօսութեան Աստուածաշունչ մատեանի պերճախօս վկայութիւններէն մին կը հանդիսանայ.

«Տէրը մորենիին մէջէն կանչեց զինք ու ըսաւ. «Մովսէս, Մովսէս»:

Մովսէս պատասխանեց՝ «Ահա այստեղ եմ (2)» (Ելք, Գ, 4-5):

Երկխօսութեան հեղինակն ու նախաձեռնողը Աստուած է, իսկ մարդը, այս պարագային՝ Մովսէս, Աստուծոյ խօսքին պատասխանողն է:

Խօսքին հասցէակիրը մարդն է միայն, մարդը՝ թագն ու պսակը աստուածային արարչագործութեան, վասնզի ան արարչուած բոլոր արարածներուն մէջ միակն է, որ կրնայ աստուածային կոչին պատասխանել ու գիտէ Անոր կենարար Սիրոյն փոխադարձել: Անկենդան եւ շնչաւոր բոլոր գոյերուն մէջ, ուրեմն, մարդը միակ գոյն է, որ խօսք ունի. ան է միակը, որ աստուածատուր առանձնայատուկ շնորհներով օժտուած է, ճանչնալու ինքզինք, իր շրջաշարհը եւ զԱստուած՝ իր գլխուն վերեւ:

Ս. Գրական վերոյիշեալ միջադէպին առթիւ ուրիշ կարեւոր իրողութիւն մըն ալ կը պարզուի կրօնագրագ մարդուն առջեւ՝ Աստուծոյ **անուան** բացայայտումը: Այս եղելութիւնը կրօնքի պատմութեան մէջ էական նշանակութիւն ունի եւ կը կազմէ յայտնաբանական աստուածաբանութեան շրջադարձային կէտերէն մին: Մովսէս հշու կամակատարը չէ Աստուծոյ, այլ իր **մարդ** աստուածապարզեւ արժէքին իսկական բարձրութեան վրայ կեցած՝ ան զրուցակցի, պահանջողի ու, որոշակի իմաստով նաեւ, մարտահրաւէր կարգացողի մը սքանչելի դերին մէջն է.

«Մովսէս Աստուծոյ ըսաւ. «Ահա, երբ երթամ Իսրայէլի որդիներուն եւ անոնց ըսեմ. ձեր հայրերուն Աստուածը զիս ձեր քով զրկեց, ու երբ ըսեն ինձի. ի՞նչ է անոր **անունը**, ի՞նչ ըսեմ անոնց»: Աստուած Մովսէսի ըսաւ. «**Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ**»: (...) «Այսպէս կ'ըսես Իսրայէլի որդիներուն՝ զիս **ՈՐ ԷՆ** ձեր քով զրկեց» (...) «Ձեր հայրերուն Աստուածը, Աբրահամի Աստուածը, Իսահակի Աստուածը ու Յակոբի Աստուածը զիս ձեր քով զրկեց. ա՛յս է իմ անունս յաւիտեան»» (Ելք, Գ, 13-15):

Հպանցիկ մօտեցումով թերեւս դժուարըմբռնելի պիտի դառնայ Ելից Գիրքէն կատարուած վերոնշեալ մէջբերումին առթիւ Աստուծոյ անուան վկայութեան «**Ես եմ Աստուած ՈՐ ԷՆ**» հին բնագրէն զբաբարի թարգմանութիւնը: Գոյութիւն ունեցող Աստուածաշունչի աշխարհաբար թարգմանութեանց մէջ կը հանդիպինք. «Ես եմ ա՛ն՝ որ է» կամ «Ես եմ որ էն» եւլն.:

Փակագրիծը լայն պէտք է բանալ հոս եւ փորձել Աստուծոյ անուան վերոյիշեալ յիշատակումի իմաստային ենթախորքը վեր հանել հետեւեալ երկու ուղղութիւններով.

ա) Ես (այն) Աստուած (-ն) եմ ՈՐ ԿԱՄ»: Ի տարբերութիւն Հրէից միջավայրին մէջ տարածուած ասորա-բաբելական եւ եգիպտական չաստուածութիւններուն, Մովսէսին յայտնուող Աստուածը միակն է, որ ճշմարտապէս կայ եւ գոյութիւն ունի: Ան ինքզինք «ծանօթացնելով» Իր մասին կը վկայէ՝ Ես Աստուածն եմ որ կայ, գոյ է, գոյութիւն ունի: Հայերէն լեզուին մէջ Է-ն լինելութեան հզօրագոյն արտայայտութիւնն է, որ իմաստային այս բառակապակցութեամբ շատ աւելի՛ «միշտ եղած է, կայ եւ ըլլալու է» նշանակութիւն ունի: Ի գուր չէ, որ մեր մատենագրութեան, ճարտարապետութեան, խաչքարերու, գարդաքանդակներու եւ մանրանկարչութեան արուեստին մէջ Է-ն՝ Աստուած անունին եւ Անոր խորախորհուրդ ներկայութեան խորագոյն խորհրդանիշն է: Միւս բոլոր չաստուածները կա՛մ բնութեան տարբեր երեւոյթներու ներկայացումներ, եւ կա՛մ մարդկային մտքի եւ երեւակայութեան արտադրութիւն են: Եւ ճիշդ այս համոզումէն մեկնելով է, որ Տասնաբանեայ օրէնքին առաջին պատուիրանը կը հրահանուէ. «Ես եմ քու Տէր Աստուածդ (...) Ինձմէ զատ ուրիշ աստուածներ մի՛ ունենար: Դուն քեզի կուռքեր մի չիներ ըստ այն նմանութեան, որ վերը՝ երկինքի մէջ, վարը՝ երկրի վրայ կամ ջուրերուն մէջ է՝ երկրի տակ: Անոնց մի՛ երկրպագեր ու զանոնք մի՛ պաշտեր, որովհետեւ քու Տէր Աստուածդ Կ՛ս եմ» (Ելք, Ի, 2-5):

բ) Աստուծոյ երեւումը Մովսէսի պատահական չէ, այլ նպատակային է: Ազատագրել Իսրայէլի որդիները եգիպտական բռնատիրութենէն(3) ու Մովսէսի ղեկավարութեամբ զանոնք առաջնորդել դէպի Քանան, այն երկիրը, զոր Աստուած ուխտած էր տալ Աբրահամի սերունդին(4): Բովանդակային այս կառոյցին մէջ, Աստուծոյ Անուան բացայայտումը իմաստային այլ խորք կը ստանայ: «Ես եմ Աստուած ՈՐ Է՛ն» շատ աւելի ճիշդ կ'ըմբռնուի ու կը թարգմանուի իբրեւ՝ «Ես Աստուածն եմ, որ կամ եւ այստեղ պիտի ըլլամ»: Բնական է, Աստուծոյ լինելութիւնը, այս պարագային, **բանի մը համար** ըլլալու հեռանկարով պիտի իմաստաւորուի. ըլլալ՝ Իսրայէլի որդիներուն համար, իսկ **այստեղ ըլլալ՝** ո՛չ Քորեբի բարձունքը եւ ոչ ալ աշխարհագրական որեւէ տարածք նկատի ունի, այլ՝ մօտ ըլլալ այն մարդոց, որոնց համար Ան կը յայտնուի, ազատարար ներկայութիւն դառնալու անոնց՝ որոնք ամբողջանուէր վստահութիւն պիտի տածեն ինքզինք յայտնած Աստուծոյ հանդէպ:

Իր անունը յայտնելով Աստուած ինքզինք կը վերածէ ներկայութեան: Գոյութիւն մը՝ ոչ թէ ինքն իր մէջ պարփակուած եւ ինքն իրեն համար եղած, այլ ի մասնաւորի ու գերազանցապէս նաեւ մարդուն շնորհուած ներկայութիւն մը: Իր անուան յայտնութեամբ Աստուած մարդուն համար կը դառնայ Անձ մը, Դէմք մը, որոշակի իմաստով՝ ՄէկԿԸ, որուն պարտի ան ոչ միայն իր խօսքը, մտածումները, տուայտանքներն ու ապրումները հասցէագրել, այլ ամբողջապէս ինքզինք նուիրել:

Աստուած ինքզինք **Յահուէ** կը կոչէ. այսինքն՝ Ան, որ այստեղ է եւ մեզի համար այստեղ պիտի ըլլայ: Ան, որ մօտ է մեզի եւ միշտ մեր քով ու մեր հետ պիտի ըլլայ: Ան, որ մեզի իր կենարար Սէրն ու անդաւաճան վստահութիւնը կը շնորհէ: Ան, որ իր արարիչ խօսքով մեզի գոյութիւն եւ կեանք պարգեւած է: Մեր անձը Անոր կրնանք վստահիլ: Անոր կրնանք մեր հաւատքը նուիրել, ու այս անկողն վստահելութեան վրայ մեր ապագան կերտել: Եհնուէ է Անոր անունը. «Ան, որ այստեղ է եւ մեզի համար այստեղ պիտի ըլլայ (5)»:

Խորացնելով Անկէզ Մորենիին ընդմէջէն Աստուծոյ ինքնաբացայայտման եւ Իր անուան ծանուցման վերոյիշեալ մտածումերը, պատշաճ կը թուի անդրադառնալ առ այն, որ Տէրունական աղօթքը աղօթելու առթիւ, երբ կը յիշատակենք «Սուրբ Եղիցի անուն քո», չի նշանակեր թէ Աստուծոյ անունը կարօտ է մեր կողմէ սրբացուելու, կամ յոռեգոյն պարագային մենք ի վիճակի ենք զայն սրբապղծելու, այլ Անոր անունը յիշելով, մենք մեր կեանքին մէջ գիտակցաբար Իր սուրբ ներկայութեան է որ տեղ կու տանք, այլ խօսքով՝ մեզ մօտ կամ մեր մէջ Իր յայտնի դարձած ներկայութիւնը կը սրբացնենք: «Սուրբ թող ըլլայ Քու անունը» յայտարարութիւնը, որքան որ Աստուծոյ սրբութիւնը ինքնստիճեան կ'ընդունի կամ կը նախադրէ, նոյնքան եւ թերեւս շատ աւելի այդ յայտարարութիւնը ընողին կամ ենթակային համար Աստուծոյ Սրբութիւնը պարտաւորիչ կը դարձնէ:

Այս առնչութեամբ արժէ անդրադառնալ Տասնաբանեայ խստագոյն պատուիրաններէն հետեւեալին, որ կը հրահանգէ.

«Մի՛ առնուցու զանուն Տեառն Աստուծոյ քո ի վերայ սնոտեաց. զի ոչ սրբեացէ Տէր զայն որ առնուցու զանուն նորա ի վերայ սնոտեաց» (Ելք, 9, 7: Երկ. Օր. Ե. 11):

Սոյն մէջբերումը մասնաւոր դիտումով գրաբար է կը կատարենք, որովհետեւ աշխարհաբար թարգմանութեանց մէջ սոյն պատուիրանը՝ «Քու Աստուծոյ անունը ընդունայն բերանդ մի առներ», կամ ուրիշ տեղեր՝ «Աստուծոյ անունը մի չարաշահեր» իմաստներով վերարտադրուած են: Բայց նկատի ունենալով վերոյիշեալ պատուիրանին նախորդող պարբերութիւնը, զոր ամբողջապէս կռապաշտութեան կ'անդրադառնայ՝ խիստ կեցուածք մը որդեգրելով ճշմարիտ Աստուծոյ պաշտամունքը խեղաթիւրող այդ հակոտնեայ երեւոյթին դէմ, առաւել եւս հակուած ենք վերոգրեալ գրաբար մէջբերումը բառացի ըմբռնելու, թէ «սնոտի երեւոյթներ, մարգակերտ իրեր կամ կուռքեր **Աստուած անունով չկոչես**»: Այլ խօսքով՝ Մարդը իրաւունք չունի սնոտիները Աստուած անուանելու:

Սոյնը մտածել կուտայ հետեւեալ ուղղութիւններով.

ա) Աստուծոյ անուան յիշատակումը՝ Աստուծոյ անմիջական ներկայութիւնը կը նախադրէ: Ոեւէ արարած, կենդանի կամ անկենդան, երբեք չի կրնար Արարչին տեղը դասուիլ եւ մարդուն համար փրկութեան աղբիւր դառնալ: Արարածը չի կրնար իր նման ոեւէ մէկ այլ արարածի, բնութեանական երեւոյթի կամ նոյնինքն արարած մարդու կողմէ ստեղծուած ոեւէ մէկ իրի, -

որը նոյնպէս արարած մը ըլլալու տեսակին տակ կ'իյնայ, – արարիչ Աստուծոյ անուն վերագրել: Աստուած գերիվեր է ու գերազանցապէս գերիվեր կը մնայ ամէն տեսակի նիւթականացումէ եւ առարկայական ըմբռնելիութենէ: Այս մասին անգամ մը եւս կը մէջբերենք Ս. Գրիգոր Նարեկացւոյ սքանչելի սահմանումը՝ «Անհասանելի հեռուոր եւ անընդմիջելի մերձաւոր»:

բ) Աստուծոյ անուան յիշատակումը ոչ միայն Անոր անմիջական ներկայութիւնը կ'ապահովէ, այլ նաեւ՝ սրբութիւնը: Սրբութիւնը մաս մը կը կազմէ աստուածային էութեան եւ բնութեան, ոչ թէ պարզապէս մեր մտքի եւ բոլոր միւս տեսակի կարողութիւններու չափանիշներուն մէջ գի՛նք պարփակել կամ ենթարկելի դարձնել չկարողանալու փաստով: Մարդուն կողմէ, չաստուածներուն վերագրուած «աստուած» անունը եւ անոր յիշատակումը ոչ միայն ճշմարիտ ներկայութիւն չի ստեղծեր, այլ իր սնոտիապաշտութեան եւ արարողական ձեւերուն մէջ մարդը կը խեղաթիւրէ, չըսելու համար՝ զինք իրմէ բխած ինքնախաբէութեամբ կը պղծէ:

գ) Անուան յիշատակումը ներկայութիւն է: Ամէն գոյ ինքն իր մէջ եւ իրեն համար կրնայ գոյութիւն ունենալ, բայց փոխաբերական իմաստով՝ չի կրնար ներկայութիւն դառնալ: Գոյն իմաստ կը ստանայ, երբ համապատասխան անուն ունենայ: Անունը ինքնութիւն կու տայ համապատասխան գոյին եւ կ'որոշէ անոր բնութիւնն ու նպատակը իր միջավայրին մէջ: Ճիշդ այս պատճառով անձի մը անուանակոչութիւնը նոյնքան կարեւոր է, որքան՝ ծնունդը կամ տարեդարձին նշումը: Անուան յիշատակումը անձը ներկայութեան կը վերածէ՝ թէկուզ բացակայութեան ժամանակ: Այս իմաստով է որ Յիսուս Աւետարանին ընդմէջէն կը հաւաստիացնէ. «Ուր որ երկու կամ երեք հոգի հաւաքուած ըլլան իմ անունովս, ես հոն եմ՝ անոնց մէջ» (Մտ, ԺԸ, 20):

Խորհրդածութիւններու այս ենթախորքէն մեկնելով, Աստուած-ա-Բանութիւն բառը կարելի է միայն Աստուծոյ խօսած խօսքէն հասկնալ: Նոր կտակարանը եւ ի մասնաւորի Պօղոս առաքեալի Եբրայեցիներուն ուղղուած թուղթը կու գան աներկբայ այս իրողութիւնը հաստատելու.

«Բազմապիսի ձեւերով եւ զանազան օրինակներով Աստուած կանխաւ մեր հայրերուն խօսեցաւ մարգարէներուն միջոցաւ. իսկ այս վերջին օրերուն ան մեզի խօսեցաւ իր Որդիով զոր ժառանգ կարգեց ամէն բանի, եւ որուն միջոցաւ ալ տիեզերքը ստեղծեց: Ան՝ որ լոյսն է իր փառքին եւ իր էութեան պատկերը, որ իր խօսքին գորութեամբ տիեզերքը կը պահէ» (Եբր. Ա, 1-3):

Ուրեմն՝ ոչ թէ պարզ խօսք մը իբրեւ բառ, քերականական կառոյց, սովորական արտայայտութիւն կամ հաղորդակցութեան միջոց, այլ խօսք մը, որուն մէջ եւ որուն միջոցաւ վկայեցին մարգարէներն ու առաքեալները: Այս նոյն խօսքն է որ Աստուած, ի լրումն ժամանակի, մէկանգամ ընդմիջտ մարդկութեան խօսեցաւ իր Միածինի՝ Յիսուս Քրիստոսի անձին մէջ: Արդարեւ, այս նոյն Աստուած Բանն է, որուն մասին Յովհաննէս Աւետարանիչ կը վկայէ.

«Սկիզբէն էր Բանը, ու Բանը Աստուծոյ քով էր, եւ Բանը Աստուած էր. ան սկիզբէն Աստուծոյ քով էր: Ամէն ինչ անով եղաւ, եւ եղածներէն առանց

անոր ոչինչ եղաւ (...) Եւ Բանը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ տեսանք անոր փառքը. Հօրմէ առած Միածինի փառքը շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն» (Յովհ. Ն, 1-14):

«Եւ Բանը մարմին եղաւ» վկայութիւնը չի նշանակեր, թէ կրօնական գաղափար մը կամ յունա-հռոմէական դիցաբանութեան նման չաստուածներէն մին մարդու կերպարանք առաւ, այլ Աստուած Բանը՝ Որդին Աստուծոյ ճշմարտապէս մարդացաւ, Աստուած Անոր Անձին մէջ, որպէս մէկը մարդոցմէ, ինքզինք մարդկութեան յայտնեց, մարդացած Խօսքին միջոցաւ կարենալ հաղորդուելու եւ մարդոց մէջ Իր ներկայութեան Աւետիսը աւետելու համար: Աստուծոյ եւ մարդուն միջեւ մարդացած Խօսքին միջոցաւ ստեղծուած կապը, այլ խօսքով՝ Տիրոջ ներկայութեան Աւետիսը դարձաւ Հաղորդութիւն մը Մարմնոյ եւ Արեան Խորհուրդի, որուն շնորհիւ կազմուեցաւ եւ որուն շուրջ համախմբուեցաւ Եկեղեցին:

Ի դէպ, հոս փակագիծ մը պէտք է բանալ «մարդեղութիւն» եւ «մարդացում»-մարդացուցանեմ» բառերը բնորոշելու համար: «Մարդեղութիւն» նախ աստուածային Խօսքի կամ Աստուած Բանի մարմնաւորումը, մարմնացումը, մարդկային մարմին ստանալը, առնելը կը նշանակէ, եւ լատիներէնի «incarnatio» բառին կը համապատասխանէ, թէպէտ հայերէն լեզուի մէջ յաճախ «մարդացում», «մարդ դառնալու» իմաստներով ալ կը հասկնուի: Մինչդեռ «մարդացում»՝ մարդ գոյութեան ամբողջութեան կը վերաբերի, մեր Հաւատամքին «մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս», կատարելապէս մարդ դարձաւ հասկացութեամբ: Անշուշտ, ո՛չ մին եւ ո՛չ միւսը աստուածային բնութեան համար որակային առաւելութիւն մը չէ, ընդհակառակը՝ խոնարհացում, այո՛, նոյնիսկ նուաստացում է, արդէն աստուածայինն ալ այդ խորախորհուրդ իրողութեան մէջ կը կայանայ. մարդը փրկելու սիրոյն Աստուած աստուածայինէն մերկացաւ, փոքրացաւ, բառին բուն իմաստով՝ նուաստացաւ, Ս. Աթանաս Աղեքսանդրացի Հայրապետի գեղեցիկ բացատրութեամբ՝ «Աստուած մարդացաւ, որպէսզի մարդն աստուածանայ»:

Այսպէս, մարդացած Խօսքին իրողութեամբ, իմաստաւորուեցաւ նաեւ Հին Կտակարանի մէջ կեդրոնական նշանակութիւն ունեցող Եբրայեցոց տապար ըմբռնումը, որ պարզապէս իբրեւ Հաղորդակցական միջոց «խօսք» մը ըլլալէ աւելի՝ «եղելութիւն», «գործողութիւն» կամ «իրողութիւն» կը նշանակէ:

Անհատը լրջօրէն խօսուած իր խօսքին մէջ կը ներկայանայ: Ան իր ամբողջ էութեամբ ներկայութիւն կը դառնայ անոր մէջ եւ ինքզինք կ'արտայայտէ՝ իր շուրջըլորը ստեղծելով Հաղորդութիւն մը: **Տապար** այն Խօսքն է, որուն միջոցաւ արարիչ Աստուած ոչնչութենէ գոյութեան կոչած, անշունչ նիւթին քով կենդանութիւն ստեղծած, մեզի կեանք շնորհած, եւ Իր իսկ Մարդեղութեան Խորհուրդով մեզի աստուածայայտնուած է:

Ամբողջացնելու համար վերը արծարծուած մտածումները, յոյժ կարեւոր է չհանտեսել նիւթին հետ առնչուող եւս երկու երեւոյթ. «լոն» եւ «լսել»: Եթէ

փորձենք յայտնաբանական աստուածաբանութիւնը՝ Աստուծոյ խօսած խօսքին ուղղուած մարդկային պատասխան մը ըմբռնել, ապա պատասխանել կարենալէ առաջ՝ լսել է հարկաւոր: Լռել, լսել եւ պատասխանել իրարու հետ սերտօրէն առնչուած, որոշակի իմաստով, իրարմէ նոյնիսկ անբաժան երեւոյթներ են: Կարելի է լսել, եթէ չգիտնաս լռել, իսկ պատասխանել՝ ամենեւին եւ ոչ: Լսել՝ չի նշանակեր պարզապէս ու ընդամէնը ձայնային գրգիռներ կամ ֆիզիքական թրթռումներ ստանալ: Խօսքն այստեղ լրջօրէն ունկնդրելու, իսկ ունկնդրուածն ալ ընկալելու մասին է: Եւ, սովորաբար, արդեօք լսել իմացողը չէ՞ որ ըսելիք ունի: Ասոր հակառակ՝ մէկը կրնայ շատ խօսիլ եւ ոչինչ ըսել:

Քրիստոնէական հասկացողութեամբ, մարդը բոլոր միւս արարածներուն մէջ իր աստուածանմանութեամբ կը բնորոշուի: Սակայն այս նմանութիւնը գերազանց բանականութեամբ կամ բարոյական հրաշալի օրէնքով մը օժտուած ըլլալու մէջ հանդիսանալէ աւելի՝ իր բուն իսկ էութեան համապատասխանելու, ի ներքին ձայնին անսալու եւ Աստուծոյ խօսքին պատասխանելու աստուածատուր շնորհքին մէջ կը կայանայ: Այսպէս, մարդը Աստուծոյ խօսքն ընկալող եւ անոր պատասխանող էակն է: Անոր համար է որ Յովհաննէս Աւետարանիչ Բանին մարդեղութեան մասին կը վկայէ. «Յիւրան եկն, եւ իւրքն զնա ոչ ընկալան» (Յով. Ա, 11):

Իր խօսքին մարդեղութեան մէջ Աստուած իր նմանին քովն է որ կու գայ. աստուածանմանը մա՛րդն է, որուն փրկութեան սիրոյն Ան կը յօժարի Բնթղեհէ՛մի մսուրին մէջ այնքան փոքրանալ, մանկանալ, մարդոցմէ գգուիլ ու փոխադարձաբար սիրուիլ, առանց դոյզն իսկ աստուածային գերակայութեան, իբրեւ մէկը իրենցմէ՝ հարազատի մը պէս անոնց մերձենալ: Սակայն խստասրտութիւնը մարդոց թոյլ չի տար զինք ընդունելու. «Բայց զինք ընդունողներուն եւ իրեն հաւատացողներուն իշխանութիւն կու տայ Աստուծոյ որդիներ ըլլալու» (Յով. Ա, 12):

Աստուծոյ որդիներ դարձան անոնք, որոնք նախ իսկապէ՛ս լսեցին, ապա մարդացած խօսքը իրենց ողջ էութեամբ ընդունեցին, նման Տէրունական այն խօսքին՝ «Ով ականջ ունի լսելու՝ կը լսէ»: Հաւատքը ճշմարիտ երկիւղով լսելէն կու գայ: Առանց լսելու՝ կարելի է ընդունիլ, եւ առանց հաւատալու՝ կարելի է փրկուիլ:

Ինչքա՛ն խորհրդաւոր է մարդ արարածի էութիւնը: Առաջին ձայնը որ կը լսէ արգանդին մէջ կազմաւորուող երեխան՝ մօրը սրտի զարկերն են: Մայրական սրտի այդ բաբախումները ոչ միայն արտաքին աշխարհին հետ ունեցած երեխայի մը նախնական կապն է, այլ անոնք կարեւոր մէկ մասը կը կազմեն իր էութեան: Փորձենք հեռացնել նորածին մանուկը մօրը գիրկէն, պիտի տեսնենք, թէ ան ինչպէս կը կորսնցնէ իր անմեղ անդորրը, ուր դեռ ներդաշնակ մը ան կը լսէր մօրը սրտին հարազատ զարկերը: Աւելի խորհրդաւոր եւ հարազատ չէ՞ արդեօք մարդ էակին համար լսել իր հանդէպ ուժգնօրէն բաբախող Արարչին սիրոյ ձայնը. ձայն, որ համապարփակ իմաստ է ու խօսքով կ'արտայայտուի. խօսք, որ մարդու լինելութեան միակ պատճառն է եւ

փրկութեան ճշմարիտ գրաւականը:

Լռելու եւ ունկնդրելու իրողութեան մէջ մենք ոչ միայն մեզի ուղղուած խօսքը շատախօսութիւններու խեղաթիւրումէն կը փրկենք, այլ միաժամանակ անաղարտ կը պահենք մեր իսկ գոյութիւնը, որուն հիմքը սկզբնական խօսքը կը կազմէ, որովհետեւ.

«Աշխարհի ստեղծագործութենէն առաջ գոյութիւն ունէր (արարիչ) խօսքը: Խօսքը Աստուծոյ հետ էր եւ խօսքը Աստուած էր: Ամէն ինչ անով եղաւ, եւ եղածներէն առանց անոր ոչինչ եղաւ (...) Եւ խօսքը մարմին եղաւ ու մեր մէջ բնակեցաւ, եւ տեսանք անոր փառքը. Հօրմէ առած Միածինի փառքը շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն» (Յովհ. Ա, 1-14):

Լռող եւ ունկնդրող կեցուածքի մը մէջ աստուածային խօսքն ընկալել կը նշանակէ՝ մեր էութեան համապատասխանել: Մեր բուն իսկ էութեան համապատասխանել կը նշանակէ՝ աստուածային խօսքը լիարժէքօրէն եւ երկիւղածութեամբ լսել: Լսուած այս խօսքին պատասխանել կը նշանակէ՝ ճշմարտապէս աղօթել:

Աշխարհին ու մարդկութեան մէկանգամ ընդմիջտ խօսուած Աստուած Բանին Մարդեղութեան խորհուրդը թող մեզ սրբացնէ եւ արժանի դաճնէ իր խօսքին նուիրումով ու հաւատքով լեցուն պատասխանելու.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ  
Օրհնեալ է Յայտնութիւնն Քրիստոսի

Արէլ Քհնյ. Մանուկեան  
Փրնեւ, Յիսնակաց Ա. Կիրակի, 2007

ԾԱՆՕԹ.

1. Այլ թարգմանութեանց մէջ՝ «Փառքը Հօր միածին Որդւոյն Աստուծոյ»:
2. Գրաբար բնագիրը՝ «Զի՞ է»: Բառացի՝ «Ի՞նչ է», ազատ թարգմանութեամբ «Ի՞նչ կը պատահի» կամ «Ո՞վ է» անպասելի կացութեան մը դիմաց զարմանք արտայայտող իմաստները կու տայ: Մինչդեռ Աստուածաշունչի այլ թարգմանութեանց մէջ՝ «Այստեղ եմ ես, Տէ՛ր» կամ «Այստեղ եմ»: Լայն առումով բացառուած չէ նաեւ «Կը լսեմ» կամ «Պատրաստ եմ Քեզ լսելու» իմաստներով հասկնալ:
3. Հմմտ. Ելք, Գ, 7-10:
4. Հմմտ. Ծն, ԺԲ, 1-3, 7:
5. Երբայքեկէն Եսաիուէ անուան թարգմանութիւնը՝ Martin Buber-էն է:

# ԾՆՆՌԵԱՆ ԽՈՂԵՐ

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն,  
ի մարդիկ հաճութիւն» (Ղկս. Բ. 14):

Դարձեալ կը ղօղանջեն Բեթղեհէմի գանգակները, աւետելով ծնունդը Յիսուս Մանկան եւ անգամ մը եւս դարաւոր քարայրէն կը լսուի արձագանգը փառքի երգին, զոր մութ ու պարզ գիշեր մը երկնային զօրքեր թնդացուցին երկինքէն մինչեւ երկիր երկարող օդային տարածութեան մէջ:

Առաջին անգամ զայն լսեցին գառնուկներ պահպանող դաշտի հովիւները եւ տեղեկացան աստուածային Գառնուկին մսուրին մէջ հանգչելուն:

Ամէն նորածին մանուկ իր ծնունդով ուրախութիւն կը բերէ իր ծնողաց տան եւ երջանկութիւն կ'առթէ անոնց:

Իսկ աստուածային Մանուկին ծնունդը եթէ իր օրին անծանօթ մնաց աշխարհին, սակայն այսօր այդ Ծնունդին տարեդարձը աշխարհի մէկ ծայրէն միւսը բոլոր քրիստոնեաներուն բերկրութիւն կը պատճառէ:

Եկեղեցին կը փառաբանէ Գերբնականին Հրաշափառ Ծնունդը աղօթքներով եւ շարականներով, ու կը կրկնէ հրեշտակային երգակցութիւնը.

«Փառք ի բարձունս Աստուծոյ,

Եւ յերկիր խաղաղութիւն,

Ի մարդիկ հաճութիւն»:

Հետեւաբար Աստուծոյ Բանին մարդեղութեան նպատակը եւ առաքելութիւնը աշխարհի վրայ խաղաղութիւն հաստատել եւ մարդոց հոգիներն ալ հաճոյացնել է:

Խաղաղութիւնը թանկագին եւ անհրաժեշտ պայման մըն է կեանքը անդորր եւ անվախ ապրելու համար:

Իսկ հաճութիւնը հոգիին երջանկութիւնն է:

Մարդկային կեանքին մէջ եթէ խաղաղութիւնն ու հաճութիւնը զիրար զրկեն հոգին կ'ապրի երանութեան եթերին մէջ:

Բայց խաղաղութեան եւ հաճութեան ընդելուզումէն առաջ անհրաժեշտ է հաւատալ Երկնաւորին եւ Անոր փառքը հիւսել՝ ճանչնալով Իր ամենակարողութիւնը:

Մէկ կողմէ Եկեղեցին «յերկիր խաղաղութիւն» կ'երգէ, միւս կողմէ պատերազմներու շեփորները կը հնչեն: Այս երկու եղելութիւններն ու իրողութիւնները իրարու հետ խոտոր կը համեմատին:

Ճիգիքական աշխարհը սկսաւ օձին խաբեբայութեամբ եւ Կայէնին ոճրագործութեամբ, որովհետեւ մոռացութեան տրուեցան հոգեկան արդարութիւնն ու սրբութիւնը:

Այսպէս ուրեմն առաջինը Ազամը տկար դուրս ելաւ իր առաքելութեան մէջ եւ պատճառ եղաւ որ երկրորդ Ազամ մարմնաւոր եւ հոգեկան զօրու-

Թեամբ ասպարէզ իջնէր պատերազմելու չարին դէմ:

Ուստի Յիսուս Քրիստոսի Ծնունդը պատահական երեւոյթ մը չէ, այլ Աստուծոյ անսահման սիրոյն արդիւնքն է:

Այդ սէրը՝ անսակարկելի ըլլալուն՝ չմարմնացաւ պալատներու մէջ, այլ երեւցաւ քարայրի մը մէջ եւ ամփոփուեցաւ անասուններու մտուրին մէջ, որպէսզի հետագային որպէս հոգեւոր սնունդ ծառայէր հաւատացեալ ասուններուն:

Աւետիսը, որ տրուեցաւ լուսաւոր երկնային էակին կողմէ դաշտի ամալութեան եւ մթութեան մէջ ծուարած հովիւներուն, զարհուրանք պատճառեց անոնց, բայց միաժամանակ կայծակի արագութեամբ լուսաւորուեցան անոնց հոգիները եւ անմիջապէս փութացին կենդանի աչքով տեսնելու համար հրաշք Մանուկը:

Ինչպէս մեծ ծրագիրներ եւ գործեր կը մշակուին մենութեամբ ու ճգնութեամբ, այնպէս ալ Մեծ Ծնունդը տեղի ունեցաւ քարայրի ամալութեան ու լուսութեան մէջ որպէսզի կարենար յեղաշրջել բովանդակ աշխարհը առանց զէնքի ու զօրքի:

Դարեր եկան, դարեր անցան, բայց չդադրեցան Բեթղեհէմի զանգակներուն ղօղանջները, միշտ թարմացնելով հաւատացեալներու հոգիներուն մէջ Յիսուս Մանկան անշուք սակայն հրաշափառ Ծնունդը:

Առաջին Ծնունդին երկինքէն մինչեւ երկիր հրեշտակներ շարուեցան ու երգեցին, իսկ միւս բոլոր տարեդարձներուն եկեղեցիի հրեշտակներ քարայրի աստիճաններն ի վար կը շարուին եւ միեւնոյն փառքի երգը կը կրկնեն հաւատացեալներու հոգիները վերացնելով:

Յիսուս Քրիստոսի Ծնունդը մարդկային հոգեկան վերանորոգութիւնն է: Համամարդկային հաճոյակապ եղբայրութիւնն է ան Իրեն նմանելով Աստուծոյ որդիներ դառնալու համար:

Յիսուս Քրիստոսի ծնունդը՝ մարդուն հոգեկան լապտերին իւր կը հայթայթէ որպէսզի ան միշտ պլպլայ հաւատքով եւ ապրի կեանքը երկնային լոյսի զօրութեամբ:

Յիսուս Քրիստոսի ծնունդը յուսաբեկ մարդկութեան նոր յոյս մըն է: Վասնզի առանց յոյսի մարդ թշուառ արարած մըն է:

Յիսուս Քրիստոսի ծնունդը Աստուծոյ երեւումն է աշխարհի վրայ Իր կամքը յայտնելու համար Իրմէ հեռացած զաւակներուն:

Ինչ ողորմելի տեսարան ունի Անոր ծննդավայրը: Պարզ քարայր մը, մէկ անկիւնը հաւանաբար յարդանոց մը, քանի մը կենդանիներ, համեստ մտուր մը, մայրը՝ Ս. Կոյսը եւ Ս. Յովսէփը ու քիչ ետք քանի մը հովիւներ, ամբողջ անձնակազմը եւ հիւրերը այդ հիւանդանոցին: Բայց Անոր ծնունդով թանկագին բան մը լեցուց մթնոլորտը, զոր ոչ մէկ մեծագին հիւանդանոց ունեցաւ ցարդ: Այդ մէկը Աստուծոյ փառքն է: Աստուծոյ փառքը հոն իջաւ որպէսզի նշխարի մը նման բաշխուի բոլոր հաւատաւոր հոգիներէն ներս:

Ասոր համար ամէն տարի կը հնչեն Բեթղեհէմի կոչնակները, աւետելու մեծ ուրախութիւնը հաւատացեալներուն եւ լեցնելու անոնց հոգիները երկ-

**նային փառքով:**

Եւ երբ կարող չենք մեր հասարակ միտքով տրամաբանել եւ հասկնալ այդ փառքին էութիւնը, հաւատքով կ'երգենք «Սորհուրդ մեծ եւ սքանչելի որ յայսմ աւուր յայտնեցաւ» ու կը ջանանք հիւրասիրել մեր հոգիներէն ներս մարդացեալ Աստուածը:

Հուսկ ուրեմն Յիսուս Քրիստոսի ծնունդը նոր դարագլուխ մը հանդիսացաւ աշխարհի քաղաքակրթութեան համար, որ հիմնովին յեղաշրջեց նախորդ քաղաքակրթութիւնները մարդոց մէջ հաճութիւն տարածելով, անոնց հոգիները մաքրելով ու սրտերը ազնուացնելով:

Հագիւ ծնաւ՝ ցնցեց Հերովդէս թագաւորը: Աղքատ ծնաւ բայց աշխարհ իրեն պատկանեցաւ: Քանի մը հոգի իրեն աշակերտեց բայց աշխարհի մեծամասնութեան խօսեցաւ: Պարզ խօսեցաւ սակայն իր խօսքերը աստուածաբանութեան ու փիլիսոփայութեան նիւթ դարձան: Մարդոց գուրգուրանքը չվայելեց, բայց սիրոյ մեծ վարդապետը հանդիսացաւ:

Մանկացաւ որպէսզի մարդկային կեանքի հանգրուաններէն անցնէր ու շեշտէր մանկութեան անուշութիւնն ու անմեղութիւնը:

Իր ծնունդը Բեթղեհէմի մէջ կոչնակներ չի ղօղանջեցին: Բայց ամէն տարեդարձին բոլոր ազգերու զանգակները կը ղօղանջեն աւետելու համար երջանիկ տարեդարձը իր պատմական եւ իրական ծնունդին:

Իր ծնունդին Բեթղեհէմ քաղաքի բնակչութիւնը հիւրընկալ չեղաւ, բայց այս օրհնաբեր տարեդարձի տօնին մեր սիրտերը Բեթղեհէմի քարայրին նման բանանք եւ ջերմ ընդունելութիւն տանք մեր հոգիներուն մէջ խաղաղութեան եւ հաճութեան ոգին դրոշմելով հոն:

Բարգէն Ա. Քեկյ. Մագուտեան

## Նուիրատուութիւններ «Լոյս»ին

Յակոբ Պասմանեան	100 տոլար
Սիրվարդ Սապաղեան	50 տոլար
Մկրտիչ Արզումանեան	50 տոլար

# ՄԱՅԵՍՏԵՐ ԷԿԷԱՐՏ

(1260-1328)

## ՅԱԻԻՏԵՆԱԿԱՆ ԾՆՈՒՆԴ

Այն ժամանակ Աստու կողմից ուղարկուեց Գաբրիել հրեշտակը մի կոյսի  
մօտ եւ ասաց.

«Ուրախացի՛ր, ո՛վ շնորհընկալ, Տէրը քեզ հետ է»:  
(Ղուկ. Ա. 26. 28):

Ղուկաս աւետարանիչը գրում է, թէ՛ «Այն ժամանակ Գաբրիել հրեշտակը Աստու կողմից ուղարկուեց»: Ո՞ր ժամանակ: Դա վեցերորդ ամիսն էր, ինչ Յովհաննէս Մկրտիչը յղիացել էր իր մօր որովայնում:

Նա, ով հարց կը տայ ինձ, թէ ինչո՞ւ ենք աղօթում, պաս պահում, մեր պարտականութիւնները կատարում, ինչո՞ւ համար ենք մկրտուած, ինչո՞ւ համար Աստուած մարդացաւ, մի բան, որին գերազանցող ոչինչ չկայ, ես կ'ասէի նրան՝ ամբողջ նրա համար է, որպէսզի Աստուած ծնուի հոգու մէջ, եւ հոգին էլ՝ Աստուծոյ մէջ: Հէնց դրա համար է գրուել ամբողջ Աստուածաշունչը, դրա համար է Աստուած ստեղծել աշխարհը եւ հրեշտակների ողջ դասերը: Եւ այս բոլորը, դարձեալ պարզապէս նրա համար, որ Աստուած ծնուի մարդու հոգում, եւ այդ հոգին էլ՝ Աստուծոյ մէջ: Յորենի սերմերի բնութիւնը կայանում է ցորեն արտադրելու մէջ: Բոլոր տեսակի մետաղների բնութեան ազնուագոյն դրսեւորումը ոսկին է, իսկ բոլոր տեսակի ծնունդների ազնուագոյնը՝ մարդ էակն է: Դրա համար էլ մի վարդապետ ասել է՝ գոյութիւն չունի մի անասուն, որ որեւէ նմանութիւն չունենայ մարդու հետ:

Պօղոս առաքեալն ասում է. «Ի լրումն ժամանակի, Աստուած ուղարկեց իր Որդուն»: Ս. Օգոստինոսը բացատրում է, թէ ինչ բան է «Ի լրումն ժամանակի» արտայայտութիւնը՝ ասելով. «Երբ այլեւս գոյութիւն չունի ժամանակ, դա է ի լրումն ժամանակին»: Օրը աւարտում է, այսինքն՝ իր լրումին է հասնում, երբ այլեւս ոչ մի բան չի մնում այդ օրուանից: Բացարձակապէս ճիշտ է այն, որ ժամանակն իր ամբողջութեամբ պէտք է չքանայ հէնց այն բոլորին, երբ սկսում է այդ ծնունդը, քանզի ոչինչ չի խանգարում այնքան այդ ծնունդը, որքան որ է ժամանակը եւ արարածը: Մի բացարձակ ճշմարտութիւն է այն, որ ժամանակը չի կարող առնչուել Աստուծոյ հետ:

Մի ուրիշ իմաստ էլ ունի «Ի լրումն ժամանակի» հասկացութիւնը: Նա, ով իշխանութիւն ունի վեց հազար տարին ամփոփելու ներկայի մէջ եւ ասելու՝ «Այսօր ծնայ գքեզ», հէնց այդ «այսօրը» նկատի ունի ժամանակի լրումը: Դա «այսօրն» է յաւիտենականութեան, որում մարդկային հոգին ճանաչում է այն ամէնը, որ աստուածային է եւ հաղորդակից է դառնում նորագոյն մի ուրախութեան: Այսօր, այս նոր ծննդով, Աստուած ստեղծում է մի անգամ եւս աշ-

խարհը յար եւ նման այն առաջին օրուան, երբ ստեղծել էր այն: Այսպիսով, այն հոգու մէջ, որ ծնուելու է Աստուած, այդ հոգին պէտք է դուրս գայ ժամանակի սահմաններից եւ թեւեր առնի թռչելու՝ դիտելու համար Աստծոյ փառքն ու ճոխութիւնը:

Այն վարդապետները, որոնք փորձում են նկարագրել, թէ ինչքան լայնածաւալ է երկինքը, անհաւատալիօրէն ասում են. ամենափոքր կարողակալու թիւնը, որ գոյութիւն ունի իմ հոգում աւելի ընդարձակ է քան լայնատարած երկինքը, էլ չեմ խօսում մտքի կարողութեան մասին, այն գլուխ-անցնում է բոլոր տարածութիւնները: Իմ մտքումս, որ հոգու թագն է, ես կարող եմ լինել ովկիանոսից հազարաւոր մղոններ այն կողմ գտնւող մի վայրում այնքան մօտիկ, որքան որ այժմ ես ինձ գտնում եմ այստեղ: Այսպիսի տարածութիւններում եւ այսպիսի աստուածային փառքերի մէջ հոգին գտնում է իր առակելազոյն գիտակցական կարողութիւնը, ոչինչ չի թաքնուում նրանից:

«Հրեշտակը ուղարկուած էր»: Վարդապետներն ասում են, թէ հրեշտակների բազմութիւնը կազմում է մի այնպիսի թիւ, որ գերազանցում է բոլոր հաշուարկները: Նրանց բազմութիւնը քանակական առումով այնքան մեծ է, որ թուերը բաւարար չեն ընդգրկելու այն: Նրանց հաշիւը կարելի չէ նոյնիսկ մտքով ըմբռնել: Այն անձը, որ կարող է բազմութիւնները առանց թուերի օգնութեան հասկանալ, նրա համար «հարիւրը» միեւնոյն բանն է, ինչ որ՝ «մէկը»: Ըստ որում, եթէ աստուածութեան մէջ գոյութիւն ունենար հարիւր անձ էլ, այն անձը, որ գիտէ ըմբռնել զանազանութիւնները առանց թուերի, նա այդ անձերի մէջ կը ճանաչի միայն ընդհանուր մէկ Աստծուն: Անհաւատ մարդիկ եւ նոյնիսկ որոշ տգետ քրիստոնեաներ զարմանում են այս բանի վրայ, նոյնիսկ մի շարք եկեղեցականներ այնքան քիչ գիտեն այս բաների մասին, որքան որ քարը կարող է իմանալ: Նրանք ասում են՝ «Երրորդութիւն», որպէս թէ նկատի առնուած լինեն երեք քարեր: Բայց նա, ով հասկանում է զանազանութիւնները առանց թուերի, նա անմիջապէս դաւանում է երեք անձերի մէջ միայն «մէկ» Աստծուն:

Ս. Օգոստինոսն ասում է. «Այն, ինչ որ հոգին սիրում է, սկսում է նմանուել դրան: Եթէ հոգին երկրաւոր բաներ է սիրում, ուրեմն դառնում է երկրաւոր: Եթէ հոգին Աստծուն է սիրում, ուրեմն կարելի՞ է ասել, թէ այդ հոգին դառնում է Աստուած»: Եթէ ես սրա նման մի բան ասէի, այն անհաւատալի պիտի թուար նրանց աչքերին, որոնք չափազանց տկար են հոգեպէս: Բայց Ս. Օգոստինոսն ասում է. «Ես չեմ այս բանն ասողը, այլ Սուրբ Գիրքն է վկայում սրա մասին՝ հաստատելով. «Ես ասացի, թէ դուք աստուածներ էք»: Եթէ մէկը մի փոքր գաղափար ունենայ կամ մի փոքր յոյս եւ վստահութիւն այն բանի մասին, որ ես խօսեցի, անպայման կը հասկանայ ասածս: Ոչ ոք իր ծննդով չի եղել այնքան մօտիկ Աստծուն կամ չի միաւորուել նրա հետ, որքան Աստծոյ մէջ վերածնւող մարդու հոգին: Բայց այդ հոգին եթէ դժուարութիւնների հանդիպի եւ ամբողջութեամբ չկարողանայ աստուածանալ, դրանում Աստուած մեղք չունի: Եթէ ատաղձագործը փտտած փայտով չի կարող

մի գեղեցիկ տուն կառուցել, դա նրա մեղքը է, այլ՝ փայտինը: Միեւնոյն բանը պատահում է Աստծոյ կատարած գործողութեանը մարդու հոգում: Եթէ հրեշտակը կարողանար իր պատկերը արտադրել եւ ծնուել մարդու հոգում, այն ժամանակ աշխարհը կարելի էր լինի համեմատել ոչ մէկ բանի հետ, քանզի հրեշտակի չնչին միջնորդութեամբ կարելի կը լինէր կանաչազարդել եւ փայլ տալ աշխարհին: Բայց ինքը՝ Աստուած է միակ աղբիւրը ծննդագործութեան, հրեշտակը դրանում պարզապէս ծառայի դեր է կատարում:

«Շնորհընկալ»: Շնորհի վերաբերեալ ամենափոքր գործը ըստ բնութեան աւելի մեծ է, քան բոլոր հրեշտակները: Ս. Օգոստինոսն ասում է, թէ Աստծոյ կողմից շնորհի միջոցով եղած գործողութիւնները մեղաւոր մարդուն դարձնում են բարի, եւ դա շատ աւելի մեծ գործ է, քան մի նոր աշխարհ ստեղծելը: Աստուած համար շատ հեշտ է շարժել երկինքն ու երկիրը, քան թէ ինձ համար շարժել մի խնձոր իմ ձեռքում: Երբ շնորհն իջնում է մարդու հոգում, նրան դարձնում է այնքան ջինջ, որ նա նմանում է Աստծուն:

«Աստուած քեզ հետ է»: Այսպիսով տեղի է ունենում ծնունդը: Սա ոչ ոքի չպէտք է անկարելի թուայ, քանզի ինչքան էլ սա անհասկանալի լինի, Աստուած ինքն է, որ հնարաւոր է դարձնում այն: Նրա բոլոր պատուիրանները ինձ համար հեշտ է պահելը: Ինչ որ ուզի թող հրամայի ինձ, դա ինձ ամենեւին չի մտահոգի, դա ինձ համար շատ քիչ բան կը լինի այն դէպքում, երբ նա միաժամանակ տայ ինձ շնորհը՝ իրագործելու այդ հրամայուածը: Ոմանք ասում են, թէ չունեն այդ շնորհը: Ես ասում եմ. «Յաւում եմ դրա համար, բայց դու կ'ուզենայի՞ր ունենալ այն»:

«Ո՛չ»:

«Այն ժամանակ ես աւելիով եմ ցաւում»:

Եթէ դու չես կարողանում ունենալ այդ շնորհը, նուազագոյնը, որ պէտք է անես, դրան ձգտելն է: Իսկ եթէ չես կարող դրան ձգտել, պարզապէս դրան ձգտելու ձգտումն ունեցիր: Դաւիթ մարգարէն ասում է. «Տէ՛ր, փափաքելով փափաքել եմ ունենալ քո արդարութիւնը»:

Թող Աստուած օգնի մեզ, որ ձգտենք Նրան այնպէս, որ նա ուզենայ ծնուել մեր մէջ: Ամէն:

## ԱՍՏԾՈՅ ՄԱՍԻՆ

Քսանչորս վարդապետներ հաւաքուեցին մի օր վիճաբանելու համար Աստծոյ բնութեան մասին: Իւրաքանչիւրը իր միտքն էր առաջ քաշում: Այստեղ դրանցից միայն մի մաս եմ մէջբերելու:

Վարդապետներից մէկն ասում էր. «Աստուած այնպիսին է, որ Նրա համեմատութեամբ ամէն ինչ, որ փոփոխական է, ամէն ինչ, որ ժամանակից է կախուած, ոչնչութիւն է: Նրանից դուրս ինչ որ գոյութիւն ունի, շատ չնչին է»:

Մէկ ուրիշն էլ ասում էր. «Աստուած անհրաժեշտօրէն պէտք է վեր լինի գո-

յուլթիւնից: Նա՛ ինքը, ոչ ոքի կարիքը չունի, այլ բոլորը Նրա կարիքն ունեն»:

Մի հրրորդ էլ եզրակացնում էր. «Աստուած բանականութիւն է, որն ապրում է միայն ինքն իր ճանաչողութեամբ»:

Մնացեալ արտայայտութիւնները մէջ կողմ թողնելով, ցանկանում եմ կենտրոնանալ երկրորդ մտքի վրայ, որի համաձայն՝ Աստուած անհրաժեշտօրէն պէտք է վեր լինի գոյութիւնից: Գոյութիւն ունեցող ոչ մի բան, նոյնիսկ ժամանակն ու տարածութիւնը չեն կարող հասնել Նրան: Նա դրանցից շատ աւելի վեր է: Աստուած բոլոր արարածների մէջ է, մինչ նրանք ապրում են, այդուհանդերձ Նա նրանցից գերադաս է:

Մէկը, որ ի վիճակի է շատ բաների մէջ լինելու, անհրաժեշտ է, որ նրանցից վեր լինի: Վարդապետներից ոմանք կ'ուզենային, որ հոգին բնակուի միայն մարդու սրտում: Հոգին, սակայն, մի անբաժանելի ամբողջութիւն է՝ ինչպէս ոտքերում, այնպէս էլ միառժամանակ՝ աչքի մէջ եւ մարմնի իւրաքանչիւր անդամում:

Վարդապետներից մէկն ասում է. «Աստուած այնպիսին է, որ գործում է յաւիտենականօրէն: Նա ինքն իր մէջ անբաժանելի է, արտաքին օգնութեան կարիք չունի, ոչ մի բանի կարօտ չէ, այլ ամենայն ինչ նրան է կարօտ, եւ ամենայն ինչ նրան է ձգտում. դա է արարուած գոյութիւնների առաջին ու հիմնական նպատակը»:

## ՎԱՏԱՀԵԼ ԱՍԾՈՒՒՆ

«Աստուած հեռու չէ ո՛չ ժամանակից եւ ո՛չ տարածութիւնից: Իսկ եթէ դու ուզում ես, որ ժամանակի կամ տարածութեան մէջ Նա հեռու չլինի քեզանից, ապա ուրեմն մօտեցի՛ր Նրան, քանզի հազար տարին Աստծոյ համար մէկ օրուայ նման է, որպիսին է մեր ապրած հէնց այս օրը»:

Այսպէս է ասել Ս. Օգոստինոսը, ես էլ կրկնում եմ միեւնոյնը: Աստծոյ մէջ գոյութիւն չունի ո՛չ տիրութիւն, ո՛չ թշուառութիւն եւ ո՛չ էլ՝ դժբախտութիւն: Եթէ կամենում ես ազատուել ամէն տեսակի դժբախտութիւնից ու թշուառութիւնից, ապա քայլերդ ուղղի՛ր դէպի Աստուած եւ միայն ու միայն Նրան մօտեցի՛ր: Ամենայն վստահութեամբ կարելի է ասել, որ ամէն տեսակի չարիքները գալիս են այն բանից, որ դու չես ապաւինում միմայն, եւ բացարձակապէս միայն, Աստծուն:

Պէտք է գիտենալ, որ ըստ բնութեան բոլոր բարիքների, բոլոր ճշմարտութիւնների եւ բոլոր մխիթարութիւնների միակ աղբիւրն ու կենսապարգեւ միակ հրակը հէնց ինքը՝ Աստուած է: Եւ այն ամէնը, որ դուրս է մնում Աստծոյ շնորհից, իր մէջ ունի մի բնական դառնութիւն, տառապանք եւ թշուառութիւն: Այս բոլորը թէեւ խորթ է համարւում աստուածային բարութեան հետ, այսուամենայնիւ իր մէջ պարփակում է եւ քօղարկում Աստծոյ կողմից տրուած մխիթարութեանց քաղցրութիւնը:

Բայց ես ասում եմ նաեւ, որ իւրաքանչիւր ցաւ գալիս է սիրելուց, յատ-

կապէս սիրած մի բանի կորստից: Եթէ ես ողբում եմ արտաքին աշխարհին պատկանող մի բանի վրայ, ապա ուրեմն դա ցոյց է տալիս, որ իմ սիրտը կապուած է այդ աշխարհին եւ, իրականում, ես սիրում եմ ցաւն ու վիշտը՝ զուարճանալով դրանցով: Այս դէպքում, ուրեմն, ինչո՞ւ զարմանալ, որ ես լի եմ ցաւերով եւ տառապանքներով, երբ իմ սիրտը փնտռում է դրանք: Արդարեւ ես ուղղում եմ դէպի արարածները, որոնցից գալիս է իմ վիշտը, միեւնոյն ժամանակ ինձ հեռացնելով նրանից, որն ըստ բնութեան ազբիւրն է մխիթարութեան եւ երջանկութեան: Ուրեմն, ինչո՞ւ պիտի զարմանալ, եթէ ես այսպիսի պայմաններում դառնում եմ դժբախտ եւ տխուր: Նա, ով արարածների մէջ է փնտռում մխիթարութիւնը, բացարձակապէս անկարելի է, որ արժանանայ Աստծոյ սփոփանքին: Բայց նա, ով արարածներից վեր բարձրանալով, սիրում է միայն ու միայն Աստծուն եւ ապա՝ Աստծով սիրում է նրա արարածներին, միայն այն ժամանակ նա կարող է ամենուրեք գտնել արդար, ճշմարիտ եւ պատշաճ մխիթարութիւն:

## ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Պօղոս առաքեալն ասում է, թէ Աստուած փորձութեան է ենթարկում բոլոր նրանց, որոնց որդեգրում է եւ ընդունում իբրեւ որդիների: Այս իսկ պատճառով նա, ով ուզում է որդի լինել, պէտք է ինքն էլ տառապի: Քանի որ Աստծոյ Որդին չէր կարող տառապել մինչ գտնւում էր իր աստուածային յաւիտենականութեան մէջ, դրա համար էլ իր ժամանակին Երկնաւոր Հայրը ուղարկեց նրան աշխարհ՝ մարդացած վիճակում, որպէսզի կարողանայ ենթարկուել տառապանքի: Այո՛, այս այսպէս է, սակայն դու կամենում ես լինել Աստծոյ որդի, բայց միւս կողմից էլ չես ուզում տառապել: Այսպիսով դու բոլորովին սխալ ընթացքում ես:

Իմաստութեան Գրքում գրուած է, թէ Աստուած փորձութեան է մատնում արդարներին այնպէս, ինչպէս որ ոսկին փորձում են կրակով: Դրան իբրեւ ապացոյց կը ծառայի նաեւ այն, որ թագաւորը ռազմաճակատ է ուղարկում նրան, կռուելու առաջին գծի վրայ, ում շատ է վստահում: Ճանաչել եմ մի մարդու, որ իր գնդում մի նորեկի ընդունելուց յետոյ, գիշերները ստիպում էր նրան դուրս գալ եւ իրեն հետ կռուի բռնուել: Մի անգամ, այդպիսի մի փորձի ժամանակ, քիչ էր մնացել, որ կեանքից զրկուէր: Այդ միջադէպից յետոյ նա իր հետ բախուած այդ զինուորին աւելիով յարգեց ու սիրեց:

Կարդում ենք, որ Ս. Անտոնիոսն էլ մի օր ենթարկուել է սարսափելի փորձութիւնների՝ յատկապէս չար ոգիների կողմից նիւթուած: Երբ նա յաղթել է նրանց, մեր Տէրը մեծ ուրախութեամբ անձամբ երեւացել է նրան: Այն ժամանակ սուրբը հարցրել է. «Տէ՛ր, մինչեւ հիմա ո՞ւր էիր, երբ ես մեծ տագնապաների մէջ էի գտնւում»: Մեր Տիրոջ պատասխանը եղել է. «Ինչպէս այս րոպէին, այն ժամանակ նոյնպէս ես քեզ մօտ էի, պարզապէս ցանկանում էի տես-

նել, թէ մինչեւ ուր կը հասնի քո բարեպաշտութիւնը»: Ճիշտ է, որ ոսկին ու արծաթը մաքուր մետաղներ են, բայց դրանցով եթէ ուզենաս թագաւորի համար մի բաժակ պատրաստել, այն ժամանակ մետաղն աւելի պիտի այրես, որպէսզի կարողանաս լաւագոյն կերպով ազնուացնել այն: Դրա համար էլ առաքեալները հրճուում էին՝ տեսնելով, թէ իրենք արժանի են համարուել Աստուծոյ կողմից կրելու վիշտ ու նեղութիւն:

Այս բոլորից բացի, Աստուծոյ Որդին, որն ըստ բնութեան որդի է, մարդանալուց յետոյ կամեցաւ լինել Աստուծոյ որդի՝ ըստ շնորհի, որպէսզի քո փոխարէն ինքը կարողանայ տառապել: Սակայն դու, որ կամենում ես Աստուծոյ որդի դառնալ, ինչպէ՞ս պիտի հասնես նպատակիդ, եթէ չես ուզում յանձն առնել տառապանքը յանուն Աստուծոյ եւ քո անձի:

Մեր Տէրը հաւաստիացնում է. «Ես նրա հետ եմ, որ ընկած է վշտերի մէջ»: Դրա վրայ հիմնուելով՝ Ս. Բերնհարդը ասում է. «Տէ՛ր, եթէ Դու ինձ հետ պիտի լինես իմ տառապանքների ժամանակ, ուրեմն թող որ միշտ տառապեմ, որպէսզի Դու միշտ ինձ հետ լինես»:

Աստուած մեզ հետ է մեր տառապանքների ընթացքում: Դա նշանակում է, նոյնինքն Աստուած տառապում է մեզ հետ: Նա, ով տեղեակ է ճշմարտութեանը, հասկանում է իմ ասածի իմաստը: Աստուած անսահմանօրէն շատ աւելի է տառապում մարդու համար, քան այս վերջինը՝ Նրա համար: Երբ Աստուած նոյնիսկ յանձն է առնում տառապանք կրել, ուրեմն, բոլորովին արդար կը լինի, որ ես էլ ենթակայ լինեմ տառապանքի, քանզի դա կը նշանակի, որ ես լաւ ուղու վրայ եմ, երբ անում եմ այն, ինչ որ Աստուած է կամենում: Ամէն օր, համաձայն Աստուծոյ պատուիրանի, աղօթում ենք այսպէս. «Եղիցին կամք քո» (քո կամքը թող լինի), սակայն, երբ Աստուած մեզ տառապանք է ուղարկում, այն ժամանակ սկսում ենք տրտնջալ ու բողոքել: Արդարեւ սա մի մեծ սխալ է:

Ոմանք, տեսնելով բարի մարդկանց վիճակուած դժբախտութիւններն ու նեղութիւնները, սխալ կարծիքներ են յայտնում, իբրեւ թէ պատահում են այդ տառապանքները նրանց գործած ինչ-որ թաքուն մեղքերի պատճառով: Երբեմն նոյնիսկ յանդգնում են ասել. «Ափսո՛ս, ես կարծում էի, թէ այս մարդը շատ բարի է, սակայն, ինչպէ՞ս կարող է պատահել, որ նա այսպիսի նեղութիւններ կրի, մինչդեռ ես նրան պատկերացնում էի իբրեւ մի ուղիղ մարդ»:

Ճիշտ է, երբ այդ տառապանքներն ու թշուառութիւնները մի իրական դժբախտութիւն են կրողների համար, այն ժամանակ նշանակում է, թէ նրանք բարի մարդիկ չեն եւ ոչ էլ՝ անմեղ: Բայց, եթէ նրանք բարի մարդիկ են, այդ ժամանակ նրանց համար տառապանքը ո՛չ դժբախտութիւն է եւ ո՛չ էլ՝ թշուառութիւն, այլ՝ մի մեծ երջանկութիւն: Աստուած ասում է. «Երանի նրանց, որ հալածուում են յանուն Աստուծոյ եւ վասն արդարութեան», իսկ իմաստութեան Գրքում կարդում ենք. «Արդարների հոգիները Աստուծոյ ձեռքում են»: Յիմարները, սակայն, կարծում են, թէ արդարները մեռնում են՝ սպառուելով իրենց ստուերի մէջ, մինչեւ իրականում նրանք գտնուում են կատարեալ խաղաղութեան եւ երջանկութեան մէջ:

Այս աշխարհի մարդիկ, այսինքն՝ նրանք, որ կառչած են աշխարհայինին, բացարձակապէս արժանի չեն ի սէր Աստծու կրելու տառապանք եւ դժբախտութիւն, ոչ իսկ կը հասկանան դրա արժէքը:

## ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

Հոգու մէջ գոյութիւն ունի մի ոյժ, որ շատ աւելի մեծ է քան ամբողջ աշխարհը: Անհրաժեշտ է, որ այդ ոյժը լինի այդքան մեծ եւ ծաւալուն, որպէսզի Աստուած բնակուի նրանում:

Շատերը չեն խնդրում «իմաստութեան հոգին», այլ փնտռում են առողջութիւն, հարստութիւն եւ հաճոյք, բայց «իմաստութեան հոգին» չի գնում նրանց մօտ: Ինչ որ նրանք խնդրում են՝ նրանց համար աւելի սիրելի է, քան՝ Աստուած: Այսպիսով նրանք Աստծուն իրենց ծառայի տեղն են դնում: Մի հարուստ մարդ ասաց բժշկին. «Բուժիր ինձ եւ քեզ կը տամ այն, ինչ որ ուզենաս», իսկ եթէ բժիշկը դրա դիմաց մի գոռոչ ուզի, դա կը լինի մի խենթութիւն, իսկ եթէ հարիւր ոսկեղբամ խնդրի՝ հարուստը անմիջապէս կը տայ նրան այդ գումարը: Հետեւաբար, իսկապէս բուրբուլի խենթութիւն է խնդրել Աստծուց այլ բան, քան Նրա անձը, քանզի Նա ոչինչ չի տալիս այնքան հաճոյքով, որքան որ ինքն իրեն: Վարդապետներից մէկն ասել է, թէ ամէն ինչ ունի իր «ինչուն», միայն թէ Աստուած դա չունի: Սակայն այն մարդը, որ խնդրում է Աստծուց մի տարբեր բան, քան Նրա անձը, այդպիսին վերածում է Աստծուն մի «ինչու»: Ինչեւ մարդն ասում է. «Իմաստութեան հոգու հետ ես կը ստանամ միեւնոյն ժամանակ բոլոր բարութիւնները»: Իմաստութեան շնորհը Ս. Հոգու եօթ շնորհներից ազնուագոյնն է: Սակայն Աստուած այդ շնորհներից ոչ մէկը չի տալիս այդպէս, մինչեւ որ նախապէս ինքն իրեն չընծայի, եւ դա տեղի է ունենում ինքն իրեն տալով եւ ծնուելով մարդու հոգում: Ամէն ինչ, որ լաւ է եւ նպաստում է ուրախութեան ու մխիթարանքի, գոյութիւն ունի «իմաստութեան հոգու» մէջ, որը բացարձակ քաղցրութիւն է:

## ԱԶՆՈՒԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ ՄԱՍԻՆ

(հատուածներ)

Մեր Տէրն ասում է. «Մի ազնուական մարդ գնաց հեռու երկիր՝ իր թագաւորութիւնը ստանալու եւ վերադառնալու համար» (Ղուկա. ԺԹ 12): Այս խօսքերով մեր Տէրը մեզ ցոյց է տալիս մարդու ունեցած բնածին եւ բնական ազնուականութիւնը, ինչպէս նաեւ այն, թէ ի վերուստ տրուած շնորհը որքան ազնուացնում է մարդուն:

Առաջին հերթին հարկ է իմանալ այն, ինչ որ սրբազան մատեաններն էլ մեզ սովորեցնում են, թէ մարդու մէջ երկու բնութիւններ կան՝ մարմնական եւ հոգեկան: Շատ ճիշտ է ասուել. «Նա, ով ինքն իրեն է ճանաչում, ճանաչում է

բոլոր արարածներին, քանզի բոլոր արարածները կամ հոգի են եւ կամ էլ՝ մարմին»։ Մարդու մասին ակնարկելիս՝ նոյնպէս ասուում է, թէ մեր մէջ գոյութիւն ունի մի արտաքին եւ մի ներքին մարդ։

Արտաքին մարդը, նոյնիսկ երբ յարակից է հոգուն կամ անբաժան նրանից, իրականում միացած է եւ խառնուած մարմնեղէնի հետ, իր գործունէութիւնը կատարում է մարմնի անդամների միջոցով, ինչպէս՝ աչքի, ականջի, լեզուի, ձեռքի եւ այլն։ Այս բոլոր յատկանիշներով մարդը Սուրբ Գրքում կոչուում է հին մարդ, հողածին մարդ, արտաքին մարդ, թշնամի եւ ստրկացած մարդ։

Միւս մարդը, որ գոյութիւն ունի մեր մէջ, ներքին մարդն է։ Սրան Ս. Գիրքը անուանում է մի նոր մարդ, երկնային մարդ, երիտասարդ մարդ, մի ընկեր, մի ազնուական։ Ահաւասիկ այս մարդու մասին է, որ խօսում է մեր Տէրը, երբ ասում է, թէ մի ազնուական մարդ հեռու երկիր գնաց, տիրացաւ իր թագաւորութեանը եւ տուն վերադարձաւ։ Այս մասին հարկ է մտածենք նաեւ, երբ Ս. Հերոնիմոսը մեզ ներկայացնում է վարդապետների այն հասարակաց ուսմունքը, որի համաձայն՝ իւրաքանչիւր մարդ ունի մի բարի հոգի, մի հրեշտակ, եւ՝ մի չար հոգի, մի դեւ։ Բարի հրեշտակը մեզ խորհրդատու է եւ մեզ անդադար ձգում է դէպի լաւն ու աստուածայինը, դէպի առաքինին, երկնայինն ու յաւիտենականը։ Չար հոգին էլ մեզ խորհրդատու է եւ մեզ անդադար ձգում է դէպի ժամանակաւորն ու կորնչելին, դէպի մեղանշականը, չարն ու սատանայականը։ Այս չար հոգին տեւապէս պծնասէր է դարձնում, ինչպէս նաեւ դարանակալում մարդուն՝ աղամին։ Ներքին մարդն էլ աղամն է, այսինքն՝ հոգեղէն մարդը։ Նա այն բարի ծառն է, որի մասին խօսում է մեր Տէրը, թէ այն միշտ բարի պտուղ է տալիս։ Նոյնպէս է նաեւ պարագան այն ոլորտներին, ուր Աստուած հաստատում է իր պատկերն ու նմանութիւնը եւ ուր ցանում է բարի սերմը, որ արմատն է ամենայն իմաստութեան, ամէն տեսակ արուեստի, ամենայն բարութեան, մէկ խօսքով՝ դա սերմն է աստուածային բնութեան։ Աւելի ճշգրիտ բնորոշումով՝ այդ սերմը Աստծոյ Որդին է, հէնց ինքը՝ Աստծոյ խօսքը։

Այսպիսով նա ով հնազանդւում է Աստծոյ Հոգուն, եւ ապրում է Նրա խորհուրդների համաձայն, պատկանում է յաւիտենական կեանքին։ Իսկ նա, ով հնազանդւում է մսեղէն կազմուածքին, մեռնում է։ Ներքին մարդը նա է, որի մասին մեր Տէրն ասում է, թէ մի ազնուական մարդ գնաց հեռու երկիր։ Արտաքին մարդը այն վատ ծառն է, որ չի կարող բարի պտուղ տալ։

Անդրադառնալով ներքին եւ հոգեղէն մարդու ազնուականութեանը, ինչպէս նաեւ մարմնեղէն մարդու գոեհիկութեանը, հեթանոս վարդապետներից Յիցերոնն ու Սենեկան նոյնպէս ասում են, որ բանական ոչ մի հոգի չէ գրկուած Աստուծոյ։ Աստծոյ սերմը մեր մէջ է։ Եթէ այն գտնի մի լաւ մշակ կամ պարտիզպան, այն ժամանակ աւելի լաւ ծիլ կ'արձակի, կ'աճի եւ կը բարձրանայ դէպի Աստուած, որ տուիչն է եղել այդ սերմի։ Դրանից յետոյ ծլած ու աճած սերմի արդիւնքը նոյնպէս կը ստանայ աստուածային բնութիւն։ Տանձենու սերմը կ'աճի ու կը վերածուի տանձենու, ընկուզենու սերմը կ'աճի ու կը վերածուի ընկուզենու, իսկ Աստծոյ սերմը կը բարձրանայ դէպի Աստուած

եւ կ'աստուածանայ, սակայն այդ սերմը եթէ ունենայ վատ եւ անառակ մշակներ, որոնք կը խառնուի դրա հետ՝ ծածկելով եւ խեղդելով բարի սերմը, որն այլեւս օրուայ լոյսը չի տեսնում եւ ոչ էլ հասնում հասունութեան: Մի մեծ վարդապետ՝ Որոզինէս անուով, մեզ ասում է. «Քանի որ հէնց ինքն՝ Աստուած է, որ մեր մէջ սերմանել է այս սերմը ու գոյակցել մեր բնութեան, ուրեմն ինչքան էլ այն ծածկուած կամ թաքնուած մնայ, դարձեալ չի ոչնչանայ բոլորովին, այլ կը շարունակի իր ձգտումը դէպի Աստուած»:

Երբ մարդը հասնում է իր ամբողջական կատարելութեան՝ հրաժարում է իր անձից եւ զգենում Աստծոյ յաւիտենականութիւնը, մոռանում է ժամանակաւոր կեանքն ու այն ամէնը, որ կորնչելի է: Նա վերածուում է մի աստուածային պատկերի եւ դառնում Աստծոյ երեխայ: Դրանից այլ կամ աւելի բարձր աստիճան գոյութիւն չունի: Դրանում է յաւիտենական հանգիստն ու երանութիւնը, քանզի ներքին կամ նոր մարդու վերջնական նպատակը հասնելն է յաւիտենական կեանքին:

Այն մասին, թէ ինչպէս աստուածային սերմը, աստուածային բնութեան պատկերն ու էութիւնը, որ հէնց ինքը՝ Աստծոյ Որդին է, դրոշմուում են ներքին մարդու, այսինքն՝ այս ազնուական մարդու մէջ, եւ թէ ինչպէս դրանք զգալի են դառնում կամ ընկալւում մարդու կողմից, մանաւանդ որ երբեմն թաքնուած վիճակում են, այս մասին մեծ վարդապետ Որոզինէսը մեզ ներկայացնում է հետեւեալ պակերը. «Աստծոյ Որդին, այսինքն՝ Աստծոյ պատկերը գոյութիւն ունի հոգու խորքում՝ ինչպէս կենարար ջրի աղբիւր: Երբ այդ պատկերի վրայ հող է լցւում, այսինքն՝ երկրային ցանկութիւնները բոյն են դնում հոգում, այն ժամանակ պատկերը ծածկւում ու թաքնւում է այն աստիճան, որ ո՛չ կարելի է ճանաչել եւ ո՛չ էլ՝ տեսնել այն: Այսուհանդերձ այն շարունակում է մնալ հոգու յատակում, իսկ երբ նրան ծածկող հողը դուրս հանուի, անմիջապէս մէջտեղ է գալիս ու տեսնւում»: Որոզինէսն ասում է նաեւ, թէ այս ճշմարտութիւնը նշմարւում է Մովսէսի առաջին գրքում (Ծննդոց), ուր գրուած է, թէ Աբրահամը իր դաշտում կենդանի ջրի մի հոր փորեց, բայց չարամիտ մարդիկ այն լցրին հողով, սակայն, երբ հողը դուրս հանուեց՝ ջրի ակերը վերակենդանացան:

Այս թեմայի մասին գոյութիւն ունեն նաեւ այլ պատկերներ: Արեգակը առանց դադարելու լոյս է տալիս, բայց երբ մեր եւ արեգակի միջեւ մի ամպ կամ մառախուղ է յայտնւում, այն ժամանակ այլեւս չենք տեսնում լոյսը: Նոյնպէս, երբ հիւանդ է աչքը, պայծառատեսութիւնը նրա համար անձանօթ բան կը լինի:

Ս. Օգոստինոսն ասում է, թէ երբ մարդու հոգին ամբողջապէս ուղղւում է դէպի յաւիտենականութիւն, այսինքն դէպի վեր՝ դէպի Աստուած, այն ժամանակ նրանում յայտնի է դառնում Աստծոյ պատկերը եւ սկսում արտացոլուել: Սակայն, երբ հոգին ձգտում է դէպի արտաքինը, եթէ նոյնիսկ առաքինութեան երեւելի գործեր էլ կատարի, նրանում Աստծոյ պատկերը բոլորովին թաքնուած կը մնայ:

«Երգ Երգոց» գրքում ասուած է. «Ուշադրութիւն մի՛ դարձրէք իմ սեւ գոյնին, քանզի ես այդ պատճառով ո՛չ պակաս գեղեցիկ եմ եւ ո՛չ էլ՝ վատ ստեղծուած, այլ, պարզապէս, արեգակը սեւացրել է ինձ»։ Արեւը այս աշխարհի լոյսն է. այս նշանակում է, թէ ստեղծագործութեան մէջ այն ամէնը, որ վեհագոյն է ու բարի, ծածկում եւ գունաւորում է մեր մէջ Աստծոյ պատկերը։ Սողոմոն Իմաստունն էլ ասում է. «Հանի՛ր արծաթի վրայից ժանգը, եւ այն ժամանակ բաժակը կը փայլի ու կը շողայ», այսինքն՝ կը փայլի Աստծոյ պատկերը մարդկային հոգում։

Եւ հէնց այս մէկն է, որ նկատի ունի մեր Տէրը, երբ ասում է, թէ մի ազնուական մարդ հեռու երկիր գնաց։ Եթէ մարդ ճշմարտապէս ուզում է Աստծոյ որդի դառնալ եւ տեղ գտնել շօր գրկում ու սրտում, այդ դէպքում հարկ է, որ նա դուրս գայ ինքն իրենից եւ իր պատկերացումներից՝ իրեն բոլորովին խորթացնելով այն ամէնից, որ վնասում է հոգու սլացքին։

Աստուած ասում է. «Ես եմ առաջինն ու վերջինը, սկիզբն ու վախճանը»։ Ոչ մի տարբերութիւն չկայ աստուածային անձերի (Ս. Երրորդութեան) բնութեան մէջ կամ նրանց միջեւ, այն պատճառով, որ նրանք մէկ բնութիւն են։ Աստուածային բնութիւնը միասնութիւն է, եւ աստուածային իւրաքանչիւր անձ էլ իր հերթին միասնութիւն է, քանզի միասնութիւնն է կազմում նրա բնութիւնը։ Էութեան եւ գոյութեան տարբերութիւնը անհետացած է բոլորովին միասնութեան մէջ։ Այս առումով էլ, նա, ով ուզում է գտնել Աստծուն, պէտք է միասնութիւն դառնայ, որովհետեւ բաժանուածութիւնը չի կարող ունենալ ո՛չ միասնութիւն, ո՛չ ամբողջականութիւն, ո՛չ Աստուած, ո՛չ երջանկութիւն եւ ո՛չ էլ՝ գոհացում։ Արդարեւ, եթէ կարողանաս լինել մի ամբողջական միասնութիւն, գոյութիւն ունեցող զանազանութիւնները կը չքանան քեզ համար եւ կը շարունակես մնալ իբրեւ միասնութիւն, քանզի քարի միասնական բնութիւնը շարունակում է մնալ միեւնոյնը թէ՛ միլիոնաւոր քարերի թէ՛ բիւրաւոր եւ թէ՛ նոյնիսկ՝ չորս քարի համար։

Մեր Տէրն ասում է. «Մի մարդ գնաց»։ Համաձայն որոշ մեկնաբանութեան՝ այստեղ «մարդ» ասելով՝ նկատի է առնուած այն անձը, որ բոլորովին հպատակում է Աստծուն եւ իր աչքերը դէպի Աստուած է բարձացնում՝ փոխանակ վար իջեցնելու՝ դէպի այն, ինչ որ իրեն է պատկանում եւ իր շուրջը կայ։ Ահաւասիկ այստեղ է կատարեալ եւ ճշմարիտ խոնարհութիւնը։ Մարդու անունը թէեւ գալիս է հողից (աղամ-հող), բայց «մարդ» նշանակում է միաժամանակ մէկը, որ վեր է բնութիւնից ու ժամանակից, այսինքն՝ նրանից, որ ենթակայ է ժամանակին՝ լինելով անկայուն եւ կապուած մարմնի ու տարածութեան հետ։

Նրանք, ովքեր ճանաչում են Աստծուն առանց Նրան տեսնելու, ճանաչում են միեւնոյն ժամանակ արարածներին։ Եւ քանի որ ճանաչումը կամ գիտակցութիւնը հոգու լոյսն է, որին բնականաբար ձգտում են բոլորը, ապա ուրեմն դրանից լաւ բան չկայ։ Հետեւաբար, վարդապետները մեզ սովորեցնում են հետեւեալը. երբ մէկը ճանաչում է արարածներին այնպէս, ինչպէս նրանք կան (այսպիսի մի ճանաչում հետնագոյն մի ճանաչում է), այդ ժամանակ

ստեղծագործութիւնը տարբեր պատկերներով է հանդէս գալիս, իսկ երբ մէկը ճանաչում է արարածներին Աստծու մէջ (այսպիսի մի ճանաչում առաջագոյն մի ճանաչում է), ստեղծագործութիւնը տեսնում է առանց բազմութիւնների, առանց նրան ներկայացնող տարբեր պատկերների եւ բացարձակապէս առանց նմանութեան որեւէ բանի հետ, այլ միայն միասնութեան մէջ, որը հէնց ինքը Աստուածն է: Այս բանն է, որ նկատի ունի մեր Տէրը, երբ ասում է, թէ մի ազնուական մարդ գնաց հեռու երկիր: Ազնուական է, քանի որ միասնութեան մէջ միեւնոյն ժամանակ ճանաչում է Աստծուն եւ Նրա ստեղծագործութիւնը:

Մի ուրիշ իմաստով էլ ուզում եմ բացատրել ազնուական մարդու հանգամանքը: Երբ մարդ (իբրեւհոգի եւ մարմին) տեսնում է Աստծուն, գիտակցում է իր տեսածը, այսպիսով մարդը ճանաչում է իբրեւ մի էակ, որ ճանաչել գիտի, այսինքն՝ ինքը գիտակցում է իր սեփական խոկումն ու սեփական ճանաչումը Աստծոյ մասին: Ոմանք կարծում են, թէ երջանկութեան արմատը պէտք է փնտռել ճանաչողականութեան մէջ, ուր մարդը գիտակցում է Աստծուն ճանաչելու իր կարողութիւնը, եւ սա բոլորովին ճիշտ է: Նաեւ ասում են՝ եթէ մարդ աշխարհի բոլոր երանութիւններն էլ ունենայ, բայց այդ մասին չգիտակցի, ի՞նչ արժեք բոլոր այդ երանութիւնները: Այս առումով էլ կարող ենք ասել, թէ հոգին չի կարող երջանիկ լինել՝ եթէ չգիտակցի իր երջանկութիւնը: Այսուհանդերձ, սա չէ պայմանը բուն երջանկութեան, որովհետեւ հոգեկան երանութեան գլխաւոր հիմքը հէնց այն է, որ հոգին առանց շղարչների նայի Աստծուն, որտեղից գալիս է իր ողջ էութիւնն ու կեանքը, որտեղից ստանում է այն, ինչ որ ինքն է, եւ ոչինչ չի մտածում իր գիտակցութեան մասին, բացարձակապէս ոչինչ, քանզի ինքը շաղախուում է Աստծոյ էութեան մէջ: Սա է ճշմարիտ Աստուած ճանաչումը:

Ազնուական մարդը ստանում է իր ողջ էութիւնը, իր ողջ կեանքն ու երանութիւնը միայն ու միայն Աստծուց, Աստծու միջոցով եւ Աստծու մէջ: Այս իմաստով էլ մեր Տէրը շատ յստակ կերպով ասում է, որ յաւիտենական կեանքը կայանում է Աստծուն ճանաչելու մէջ, իբրեւ միակ ճշմարիտ Աստուած, եւ ոչ թէ՛ Աստծուն ճանաչած լինելու իր գիտակցութեան մէջ: Ի վերջոյ մարդ ինչպէ՞ս կարող է գիտակցել Աստծոյ մասին ունեցած իր ճանաչողականութիւնը, երբ չի կարող նոյնիսկ ինքն իրեն ճանաչել: Մէկ բան է յայտնի, եթէ մարդը գտնւում է երանութեան մէջ, եթէ նա հասել է երանութիւնների երանութեան, այլեւս չկայ որեւէ ձեւ, որ ինքն իրեն ճանաչի. ոչինչ չի ճանաչում՝ բացի Աստծուց: Բայց երբ հոգին գիտակցում է, թէ ճանաչում է Աստծուն, այն ժամանակ նշանակում է, թէ գիտելիքներ է ձեռք բերել Աստծու եւ իր մասին: Արդարեւ այն ունակութիւնը, որով աչքը տեսնում է, միեւնոյնը չէ, որով աչքը ճանաչում է: Տարբեր կարողութիւն կայ տեսնելու եւ տարբեր՝ ճանաչելու այն, ինչ որ տեսնում է: Նաեւ ճիշտ է, որ ժամանակաւորապէս, եւ այստեղ այն կարողութիւնը, որ մեր մէջ առաջացնում է գիտակցութիւնը մեր տեսածի նկատմամբ, աւելի վսեմ է եւ ազնուագոյն քան այն, որ պատճառն է այդ տեսածի, քանզի բնութիւնը վերջին արդիւնքներից սկսում է իր գործը,

մինչդեռ Աստուած սկսում է իր գործը առաջագոյն պատճառներից: Բնութեան կարգով մարդն իր սկիզբն է առնում երեխայութիւնից, հաւը՝ ձուկից, մինչդեռ Աստուած երեխային մէջտեղ է բերում հասուն մարդուց, իսկ ձուկն էլ՝ հաւից: Բնութիւնը անում է այնպէս, որ նախ փայտը տաքանայ, բռնկուի եւ նոր յետոյ կրակ դառնայ, մինչդեռ Աստուած ինքն է տալիս իւրաքանչիւր անձի էութիւնը, իսկ դրանից յետոյ, ժամանակի մէջ կամ երբեմն ժամանակից դուրս, տալիս է իւրաքանչիւրին իր բնութեան յատկանիշները: Նմանապէս Աստուած տալիս է Սուրբ Հոգին՝ նախքան դրա բազմերանգ շնորհները:

Մեր Տէրը շատ տեղին է ասում. «Մի ազնուական մարդ հեռու երկիր գնաց՝ ստանալու իր թագաւորութիւնը եւ վերադառնալու»: Այս նշանակում է, թէ մարդը մէկ է, այսինքն՝ ինքն իրենով մի միասնութիւն է: Իբրեւ այդպիսին, նայելով Աստծուն՝ պէտք է Նրա միասնութեան հետ միանայ եւ ապա՝ վերադառնայ, այսինքն՝ գիտենայ եւ ըմբռնի, թէ ինքը ճանաչում է Աստծուն, թէ ինչ-որ բան իմանում է Նրա մասին:

Միասնութիւնը միասնութեամբ, միասնութիւնը՝ բխելով միասնութիւնից, միասնութիւնից միասնութեան մէջ, յաւիտենական միասնութեամբ:

## ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Կ'ուզենայի մի սպիտակ գրատախտակի վրայ շատ աւելի գեղեցիկ բան գրել՝ քան այն, որ այնտեղ գոյութիւն ունի: Սակայն ինձ գտնում եմ մեծ դժուարութեան առաջ: Եթէ ես ուզում եմ լաւագոյնը գրած լինել, այդ դէպքում ես պէտք է ջնջեմ այն բոլորը, որ նախապէս գրուած էր այնտեղ: Ոչինչ չի կարող գոհացում տալ նման մի փափաքի եւ յարմարագոյն առիթ լինել՝ քան այն, երբ այլեւս այնտեղ ամենեւին ոչինչ գրուած չլինի:

Նոյնպէս, երբ Աստուած կամենում է կատարեալ կերպով մի բան գրել իմ սրտում, ուրեմն այնտեղից պէտք է մաքրի այն ամէնը, ինչ որ խորթ է նման մի շնորհի ընդունմանը:

Մարդիկ չպէտք է այնքան շա՛տ մտածեն ինչ-որ լաւ բան անելու մասին, այլ նախ՝ լաւ լինելու մասին: Եթէ նրանք լաւ լինեն, այն ժամանակ նրանց գործերն էլ փայլուն կը լինեն:

Երբ դու ինքդ արդար ես՝ քո գործերն էլ, անտարակոյս, արդար են:

Մի՛ մտածիր քո փրկութիւնը հիմնել քո գործերի վրայ, այլ այն պէտք է հիմնել քո ներքին էութեան վրայ: Արդարեւ, ոչ թէ գործերն են սրբացնում մեզ, այլ մենք ենք, որ մեր մաքուր էութեամբ սրբացնում ենք մեր գործերը:

Նա, ով կառչում է Աստծուց, Աստուած էլ իր հերթին, իր բոլոր բարութիւններով, կառչում է նրանից:

Սիրոյ համար գոյութիւն չունի աւելի լաւ չափանիշ, քան վստահութիւնը: Երբ մէկը ամբողջ սրտով եւ անձնուիրութեամբ սիրում է մէկին, այն ժամանակ ինքնաբերաբար նաեւ վստահում է նրան:

Ճշմարիտ եւ կատարեալ աստուածսիրութիւնը յայտնի է դառնում նրանով, թէ մարդ ինչ չափով է իր յոյան ու վստահութիւնը դնում Աստծու վրայ:

Աստուած միշտ պատրաստ է, բայց մենք՝ անպատրաստ: Աստուած մօտիկ է մեզ, իսկ մենք՝ Նրանից հեռու: Աստուած մեր մէջն է, իսկ մենք՝ Նրանից դուրս:

Անկեղծ եւ ամբողջական նուիրուածութիւնը մի առաքինութիւն է, առանց նրա ոչ մի արժէքաւոր գործ մէջտեղ չի գալիս:

Երբ մարդ ուրիշի հանդէպ իր նուիրուածութեան պատճառով հրաժարւում է իր անձնական շահերից, իր նեղութեան ժամանակ Աստուած էլ օգնութեան է հասնում նրան:

## ՍԱՄԱՐԱՑԻ ԿԻՆՈ

Մի օր մեր Տէրը յոգնած նստել էր ջրհորի մօտ: Գալիս է մի հեթանոս սամարացի կին՝ ձեռքին մի սափոր եւ մի պարան՝ հորից ջուր հանելու: Մեր Տէրն ասում է նրան. «Կի՛ն, տուր ինձ խմելու ջուր»: Նա, սակայն, պատասխանում է. «Ինչո՞ւ ես ինձանից ջուր խնդրում, չէ՞ որ դու հրեայ ես, իսկ ես՝ սամարացի, եւ մեր ու ձեր հաւատները բոլորովին տարբեր են»: Տէրը պատասխանում է. «Ա՛խ, միայն իմանայիր, թէ ով է քեզանից ջուր խնդրողը եւ ճանաչէիր Աստծոյ շնորհը, այն ժամանակ, վստահաբար, դու ինձանից խմելու ջուր կը խնդրէիր, եւ ես քեզ կը տայի կենդանի ջուր: Քանզի ով այս ջրից խմի՝ նորից կը ծարաւի, բայց ով խմի իմ տուած ջրից՝ յաւիտեան չի ծարաւի եւ նրա միջից կը բխի յաւիտեանական կեանքի մի աղբիւր»:

Կինը ուշադրութեամբ էր լսում մեր Տիրոջը, եւ քանի որ չէր սիրում յաճախակի գալ ջուր տանելու, ասում է. «Տէ՛ր, տո՛ւր ինձ խմել այդ ջրից, որպէսզի այլեւս երբեք չծարաւեմ»: Այն ժամանակ մեր Տէրն ասում է. «Գնա՛ եւ բե՛ր ամուսնուդ այստեղ»: Կինը յայտնում է. «Ամուսին չունեմ»: Տէրը վրայ է բերում. «Դու ճիշտ ես խօսում, ո՛վ կին, քանզի հինգ ամուսին ես ունեցել, իսկ ում այժմ ունես, դա էլ իրականում քոնը չէ»: Կինը, ապշահար, թողնում է պարանը ձեռքից, սափորն ընկնում է հորի մէջ, ապա գոչում . «Տէ՛ր, ո՞վ ես դու, տեսնում եմ, թէ իսկապէս մի մարգարէ ես: Հիմա հասկանում եմ գրուածը, ըստ որի՝ երբ գայ մեսիան, որին Քրիստոս են անուանում, մեզ ամէն ինչ կը սովորեցնի եւ մեզ կը յայտնի ճշմարտութիւնը»: Դրա վրայ մեր Տէրն ասում է. «Կի՛ն, ես եմ այդ մեսիան, հէնց ես, որ խօսում եմ քեզ հետ»: Այս խօսքերը յուզում են կնոջ սիրտը, որ հարց է տալիս.

- Տէ՛ր, մեր հայրերը աղօթել են այս լեռների վրայ, բայց դուք՝ հրեաներդ, ասում էք, թէ պէտք է աղօթել միայն Երուսաղէմում՝ տաճարում: Ասա՛ ինձ, Տէ՛ր, ովքե՞ր են, որ ճշմարտապէս պաշտում են Աստծուն եւ ո՞րն է լաւագոյն սիրտը:

Մեր Տէրը պատասխանում է.

- Ո՛վ կիրն, ժամանակը կը գայ, եւ արդէն իսկ եկել է, որ Աստծուն պաշտողները կը պաշտեն նրան ոչ թէ միայն տաճարում կամ այս լեռների վրայ, այլ ամենուրեք՝ հոգով եւ ճշմարտութեամբ: Հայրն էլ իրեն այդպիսի երկրպագուներ է ուզում:

Կիրն այդ պահին լցում է Աստծով, իր մէջ զգում է նրա ջերմացնող զօրութիւնը այն աստիճան, որ սկսում է քարոզել նրան: Ում որ տեսնում է, ուզում է մօտեցնել Աստծուն եւ զգացնել տալ նրան Աստծոյ ներկայութիւնը, ինչպէս որ ինքն իր մէջ էր զգում: Այս բանը պատահեց նրան յատկապէս այն ժամանակ, երբ նա գնաց ու միացաւ իր ամուսնուն:

Աստուած ամբողջական կերպով հրեքը չի յայտնւում մարդկային հոգուն կամ ճանաչւում նրա կողմից, մինչեւ որ այդ հոգին իր հետ չտանի իր «ամուսնուն», այսինքն՝ իր ազատ կամքը: Դրա համար էլ մեր Տէրն ասել է. «Կիրն, դու ճիշտ ես խօսում, քանզի հինգ ամուսին ես ունեցել, որոնք այլեւս չեն ապրում»: Որո՞նք են եղել այդ հինգ ամուսինները: Դրանք այն հինգ զգալարաններն են, որոնցով նա մեղանչել էր, եւ այդ պատճառով էլ դրանք մահացել էին մեղքի մէջ: Իսկ ինչ վերաբերում է այն խօսքին, թէ «այժմ ունեցած ամուսինդ էլ իրականում քոնը չէ» նկատի ունի կնոջ ազատ կամքը, որն այլեւս իրեն չէր պատկանում, որովհետեւ մահացող մեղքերը կալանքի տակ էին պահում այն, եւ կինը նրա վրայ ոչ մէկ իշխանութիւն չուներ, դրա համար էլ ուրիշներն էին նրա տէրը: Իրականում, բոլոր այն բաները, որոնց վրայ մարդ ոչ մի իշխանութիւն չուներ, չի պատկանում իրեն: Դրանց տէրը նա է, ով իշխանութիւն ունի դրանց վրայ:

Եւ ես աւելին պիտի ասեմ. երբ մարդ հեղինակութիւն է ձեռք բերում իր ազատ կամքի վրայ այն աստիճան, որ կարողանայ յաւիտենապէս միացնել այն Աստծոյ կամքին՝ դառնալով նրա միասնութեան մէջ մի միասնութիւն, այն ժամանակ նրան կը մնայ միայն սամարացի կնոջ նման ասել. «Տէ՛ր, ցոյց տուր ինձ, թէ ուր պէտք է աղօթել եւ թէ ինչ բան պէտք է անեմ, որ քեզ համար հաճելի լինի»: Եւ Յիսուս կը պատասխանի, այսինքն՝ կը յայտնի ինքն իրեն ճիշտ այնպէս, ինչպէս գոյութիւն ունի, եւ մարդուն կը լցնի այնպիսի առատութեամբ, որ սա կը սկսի լիանալ ու յորդել Աստծոյ ճոխացուցիչ ներկայութեամբ, ինչ որ պատահեց Չրոբի մօտ գտնուող կնոջ հետ, որը շատ քիչ էր պատրաստուած այդպիսի մի յայտնութեան համար: Մեզանից ոչ ոք հոգով այնքա՞ն բիրտ չէ եւ մտքով էլ այնքա՞ն աղքատ կամ վատ, որ չկարողանայ Աստծոյ շնորհիւ ներդաշնակել ու ամբողջապէս միացնել իր կամքը Աստծոյ կամքի հետ: Մեր այս ցանկութեան մէջ բաւական կը լինի ասել. «Տէ՛ր, ցոյց տուր ինձ քո ամենասիրելի կամքը եւ ոյժ տուր ինձ ընթանալու քո կամքի համաձայն»: Եւ Աստուած կը կատարի քո փափաքը: Մեզանից նոյնիսկ նա, ով ամենից փոքրն է ու ամենապարզը, կարող է ստանալ աստուածային այդ շնորհը:

## ՄԽԻԹԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գոյութիւն չունի մի դժբախտութիւն, որ ինքնին այդպիսին լինի, ոչ էլ՝ մի վնաս, որ ինքնին եւ ամբողջութեամբ այդպիսին լինի: Այս պատճառով էլ Պօղոս առաքեալն ասում է. «Աստուծոյ հաւատարմութիւնը եւ իր բնութեան յատուկ բարութիւնը չի թողնի, որ որեւէ վնաս կամ փորձութիւն լինի չափազանց կամ անտանելի, քան դրանք կրելու ձեր կարողութիւնը» (Հմմտ. Ա Կորնթ. Ժ 13): Իսկ սրբերը, ինչպէս նաեւ հեթանոս վարդապետներից ոմանք ասում են, թէ Աստուած եւ բնութիւն չեն հանդուրժում, որ գոյութիւն ունենայ կամ ունեցած լինի որեւէ ամբողջապէս վատ կամ անտանելի բան:

Ենթադրենք, թէ մի մարդ ունի հարիւր դուկատ (գերմանական ոսկեդրամ), որից կորցնում է քառասունը եւ մնում վաթսուն դուկատով: Եթէ այդ մարդը իր ամբողջ ժամանակը շարունակի մտածել իր կորցրած քառասուն դուկատի մասին՝ տեւապէս կը մնայ տխուր եւ անմխիթար: Ինչպէ՞ս կարող է մխիթարութիւն գտնել եւ իր ցաւը մոռանալ այն անձը, որ իր աչքերը միշտ յառած է պահում իր կորստի ու վշտի վրայ: Բայց եթէ պատահի հակառակը, այսինքն՝ ուշադրութիւն չդարձնի իր կորցրած քառասուն դուկատին եւ մտածի դեռեւս ունեցած իր վաթսունի մասին, այն ժամանակ անպայման կը մխիթարուի:

Այս պատճառով էլ Սողոմոն իմաստունն ասում է. «Ցաւի եւ նեղութեանդ օրերին մի՛ մոռացիր երջանկութեանդ եւ ուրախութեանդ օրերը», այսինքն՝ երբ ընկնես ցաւերի ու վշտերի մէջ՝ նկատի ունեցիր այն, ինչ որ քեզ համար դեռ մնացել է լաւ եւ հաճելի, որպէսզի կարողանաս այդ մնացածը վայելել: Բացի սրանից, մարդ պէտք է մխիթարուի մտածելով նաեւ այն մասին, թէ հազարաւոր անձեր երջանիկ պիտի լինէին, իրենք իրենց հարուստ պիտի համարէին ու Աստուծոյ գոհութիւն յայտնէին, եթէ ունենային այն վաթսուն դուկատը, որ մնացել է քեզ:

Մի ուրիշ բան կայ եւս, որ պէտք է մխիթարի մարդուն, երբ նա հիւանդ է եւ մարմնով շատ է տառապում, սակայն գլուխը դնելու մի տեղ ունի, բաւարար չափով ուտելիք եւ ըմպելիք, բժիշկների խորհուրդներն ու իրեն սպասարկողներ, իր ընկերների համակրանքն ու կարեկցութիւնը, ի՞նչ վերաբերմունք պէտք է ունենայ: Ուրեմն, ի՞նչ թող անեն այն բազմաթիւ աղքատները, որ միեւնոյն ցաւերն են կրում, բայց առաւել եւս՝ մէկը չունեն նոյնիսկ մէկ բաժակ սառը ջուր տալու իրենց: Նրանք ստիպուած են նոյնիսկ ձեան եւ անձրեւի տակ դռնից դուռ իրենց հացը մուրալու: Եթէ ուզում ես մխիթարուել՝ ուրեմն մոռացի՛ր նրանց, ովքեր քեզանից աւելի լաւ են, եւ մտածի՛ր միայն նրանց մասին, որոնց պայմանները շատ աւելի վատ են, քան՝ քոնը:

Միւս կողմից էլ՝ ոչ մէկ բան, որ Աստուծոյ դուրս է կամ նրանից տարբեր, չի կարող գոհացնել կամ մխիթարել մարդուն: Այլ, ընդհակառակը, այն ամէնը, որ անհամատեղելի է Աստուծո հետ, ոչ միայն մխիթարիչ չէ, այլ պատճառ է ամենայն դժբախտութեան: Ամենայն ժամ պէտք է ասել. «Տէ՛ր իմ, Աստ-

*ուած իմ եւ մխիթարի՛չ իմ, եթէ Քեզանից բացի ուրիշ մէկին ինձ ուղարկելու լինես, ես դարձեալ Քե՛զ պիտի ցանկամ, քանզի Դու ես միակ անձը, որ իմաստաւորում է իմ գոյութիւնը»։ Երբ Աստուած խոստանում է Մովսէսին ամէն տեսակ ունեցուածք եւ ուղարկում նրան դէպի Աւետեաց Երկիրը, որ խորհրդանշին է երկնքի արքայութեան, Մովսէսն ասում է. «Ո՛ր Տէր, ինձ մի՛ ուղարկիր այնտեղ, եթէ դու չպիտի դաս ինձ հետ»։*

(Շար. 2 եւ վերջ)

Ուսումնասիրեց եւ թարգմանեց՝

ՅԱԿՈՒ ԱՐՔ. ԳԼՆՃԵԱՆ

### Օգտագործուած աղբիւրներ

1. Josef Quint, “Meister Eckhart, Deutsche Predigten und Traktate”, München, 1955, 1979.
2. Friedrich Heer, Meister Eckhart, Predigten und Scheriften, Frankfurt, 1956.
3. Kurt Ruh, “Meister Eckhart, Theologe, Prediger, Mystiker”, 1985.
4. Eckhart, “Von der Stille”, (Hyperion Verlag), Freiburg im Breisgau.
5. M. Eckhart, “Tratados y sermones”, “Obras alemanes”, Barcelona, 1983.
6. Winfried Trusen, “Der Preze gegen Meister Eckhart”, Paderborn, 1988.
7. Meister Eckhart, “Deutsche Predigten”, (Eine Auswahl), Ditzingen, 2001.
8. Meister Eckhart, “Von Wunder der Seele”, Ditzingen, 1986.

# ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դանատայի Հայոց Թեմի մեր սիրեցեալ Հոգեւորականաց Դասուն, ժողովականութեան անդամներուն եւ մեր ժողովուրդի զաւակներուն ուրախութիւնը ունինք տեղեկացնելու, որ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ, ընդառաջելով Թեմիս Բարեջան Առաջնորդ՝ Տ. Խաժակ Ս. Արք. Յակոբեանի եւ Ազգային Վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու խնդրանքին, Մեծի Տանն Կիլիկիոյ Միաբանութեան երիտասարդ ու ժրջան անդամներէն՝ Հոգեշնորհ Տ. Սիփան Վրդ. Քեչէնեանը նշանակած է Թեմիս Առաջնորդի Յատուկ Օգնական:

Հոգեշնորհ Հայր Սուրբը՝ Աւագանի անունով Յարութիւն, ծնած է 3 Դեկտեմբեր 1975ին, Պէյրուք (Լիբանան): Նախնական կրթութիւնը ստացած է Պէյրուքի «Վահան Թէֆէեան» վարժարանին մէջ, ուրկէ շրջանաւարտ ըլլալէ ետք, 1989ի Հոկտեմբերին, որպէս սան ընդունուած է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք (Պիֆֆայա): Ժառանգաւորաց բաժինը ամբողջացնելէ ետք, 1993ի Յունիսին ձեռնադրուած է սարկաւազ, ձեռամբ Տ. Ղեւոնդ Արք. Զէպէյեանի:

Ընծայարանի քառամեայ աստուածաբանական ուսմանց շրջանը աւարտելէ ետք, 18 Մայիս 1997ին ձեռնադրուած է կուսակրօն քահանայ, ձեռամբ Տ. Սուրբէն Արք. Գաթարոյեանի, վերակոչուելով Սիփան Աբեղայ:

Այնուհետեւ Հայր Սիփան վարած է վանական զանազան պաշտօններ, ինչպէս Դպրեվանքի հսկիչ, մատակարարացետ, ապա փոխ-լուսարարացետ եւ լուսարարացետ: Իսկ 2005 Հոկտեմբերին նշանակուած է փոխ-տեսուչ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին:

Հայր Սիփան պաշտպանելով իր աւարտանառը՝ Ս. Ներսէս Շնորհալիի «Մատթէի մեկնութիւնը», 19 Մայիս 2002ին Անթիլիասի Մայր Տաճարին մէջ ստացած է վարդապետական աստիճան: Իսկ 2005ի Փետրուարին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս անոր շնորհած է վարդապետական ականակուռ լանջախաչ կրելու իրաւունք, գնահատելով Հայր Սուրբին նուիրեալ ծառայութիւնը:

Կը հաւատանք, որ սիրելի Հայր Սուրբը իր աղօթանուէր կեանքով, իր քաղցր բնաւորութեամբ եւ աշխատասիրութեամբ, մեծապէս պիտի սատարէ թեմիս հոգեւոր մատակարարումի գործին եւ իր ներդրումը պիտի ունենայ մեր հոգեւոր ծառայութեան բարգաւառումին մէջ:

Յանուն Թեմիս Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգեւորականաց դասուն, Ազգային Վարչութեան, Եկեղեցիներուն, ժողովականութեան եւ ժողովուրդին, բարի գալուստ եւ Ասուածահանոյ գործոց յաջողութիւն կը մաղթենք սիրելի Հայր սուրբին:

ԳԻՒԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ

# ՍՈՒՐՔ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ

*Զօն՝ եկեղեցւոյ 25-ամեակին*

Սուրբ Աստուածամօր անունով օծուած,  
Վեհապանծ տանար՝ պարծանք հայութեան,  
Կանգնեցար որպէս սուրբ աղօթարան,  
Հայու հաւատքով ոգեղինացած:

Սուրբ Աստուածածին հայ եկեղեցին,  
Շինուեցաւ կամքով ամբողջ հայութեան,  
Որպէսզի հայը ապրի յաւիտեան,  
Կառչած դարաւոր իր լոյս հաւատքին:


Սուրբ Աստուածածին հայ եկեղեցի,  
Հայ ժողովուրդի հաւատքի խորան,  
Ուր հաւատացեալ հայերը կու գան,  
Լուսաւորուելու ջանով Յիսուսի:

Սուրբ կոյս Մարիամ, Սուրբ Աստուածածին,  
Աստուածատուր մայր ամբողջ հայութեան,  
Դարեր շարունակ քեզմով ապրեցան,  
Յիսուսը պաշտող հայեր սրտագին:

Անցած է արդէն քսանհինգ տարին  
Հիմնադրութեան «Սուրբ Աստուածածին»  
Վեհանիստ տեսքով հայ եկեղեցիին,  
Որպէս պահապան հայ ժողովուրդին:

Քսան հինգ տարի հովիւներ անխոնջ,  
Հաւատքով վսեմ, հոգիով պայծառ,  
Լուսաւորեցին հաւատքով տկար  
Հոգիներ մթին՝ մտքով պեկոծ:

Արդ, մենք կը մաղթենք Սուրբ Աստուածածին,  
Որ մեր շրթներէն բխող աղօթքով,  
Կարենանք քաջիկ քու ուղիներով,  
Ապրելով կեանք մը սիրով կաթոգին:



Վերեւի «Ողջո՛յն քեզ, Մարիամ» հայերէն գրութիւնը, այլ լեզուներու կարգին, գունագեղ խճանկարային արձանագրութեամբ կը գտնուի Ուաշինկթըն մայրաքաղաքի ֆրանսիսքան վանքի վարդաբանի կամարողիին (Rosary portico) երկայնքին: